
Տարազ

ԳԵՂԱՐԻՆՍՄԱԿԱՆ-ԳՐԱԿԱՆ-ԵՐԳԻՃԱԲԱՆԱԿԱՆ
ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Աղբիւրի տարեկան բաժանորդագինն է 3—28 կ. իսկ Տարազինը 6 բուբլի. առանձին №-ը 25 կ: Հասցէն. Тифлисъ, редакція иллюстр. журн. Агбюръ կամ Таразъ. իսկ արտասահմանից Tiflis-Caucase, Rédaction des jour. illustrés Agbur կամ Taraz.

№ 26 | Կիրակի 14 յուլիսի | երկրորդ տարի | 1891

Մ. Ի. ԼԵՐՄՕՆՏՕՎ

Լերմօնտօվների տոհմը բուն Շոտլանդացի է, որ յայտնի էր դեռ ԺԱ. դարում. ԺԷ դարում Շոտլանդիայում եղած խռովութիւնների միջոցին՝ դրանցից մէկը Իւրիյ Լերմօնտը եկաւ Լեհաստան, յետոյ փոխադրուեց Մօսկւա Միխայիլ Թէօդօրօվիչ Թագաւորի հրաւէրով:

1817 թւին ծնուեցաւ Մօսկւայում Միխայիլը. երեք ամեայ մանուկը գրկւեց մօրից. տատը նրան առաւ իր խնամքի տակ եւ տարաւ հետը իր գիւղը Թարխանա ու ամենայն ջերմեռանդութեամբ պարապեց նրա կրթութեամբ:

1828 թւին Լերմօնտօվ մտաւ Մօսկւայի համալսարանի պանսիօնը. այդ միջոցին նա արդէն սկսել էր գրել: 1830-ին մտաւ համալսարան. բայց նա առաջին կուրսից ստիպւած եղաւ ելնել մի պրօֆեսսօրի հետ գժտութիւն ունենալու պատճառով. գնաց Պետերբուրգ եւ մտաւ զինուորական դպրոց, որտեղից երկու տարուց յետոյ ելաւ լէյբ-գւարդիայի հուսարական զօրագնդի կոռնետի աստիճանով:

1835 թւին առաջին անգամ լոյս տեսաւ նրա գրական երախայրիքը Հաջի-աբրէկ վերնագրով, որ ծածուկ իր ընկերներից մէկը տուել էր հոշակաւոր մատենագիր Սենկովսկուն, որ տպագրեց իր Գրադարան-Ընթերցարան ամսագրում: Բայց նա յանկարծ փայլեց գրական ասպարէզում իր ոտանաւորով, որ գրել էր Պուշկինի դուէլի եւ տրագիքական վախճանի մասին: Պետերբուրգ նա խորասուզւած էր բարձր դասակարգի շքեղաշուք սրահներում, ուր նա ամենի, մանաւանդ գեղեցիկ սեռի, հետաքրքրութեան, հիացման, նոյն իսկ պաշտելոյ առարկան էր:

Գրող Պանաեւը նրան նկարագրում է այսպէս. նա միջահասակ էր, հաստ ու կոշտ կազմւածքով, մեծ գլխով, ունէր դէմքի խոշոր գծագրութիւն, լայն ու մեծ ճակատ, խոր, խելօք, հուժկու, թափանցող, սեւ աչքեր, որոնք շփոթեցնում էին՝ երբ նա սեւեռում էր մէկի վրայ:

Այն ինչ աճում էր նրա հսկա տաղանդը, որ դիւթել էր ժամանակի հասարակութեանը եւ մեծանուն կրիտիկոս Բելինսկուն, ահա ապաբախտ պօէտի գլխին վրայ հասաւ նոր փոթորիկ: Նա աքսորուեց Կովկաս—Պետերբուրգ, Փրանսիական դեսպանի որդու հետ ունեցած կուի պատճառով: Հանքային ջրերում մի զմայլելի գեղանի օրիորդի ուշքը, որ գերել էր Մարտինով անունով բացառիկ գեղեցկադէմ երիտասարդ սպան, — դէպի ինքը գրաւելու համար վիրաւորեց վերջինիս, որ նրան դուէլի կանչեց եւ գետին տապաստ դրաւ 1841 թւի յուլիսի 15-ին, երեկոյեան 5 ժամին, ահեղակոծ մրրկի ժամանակ:

Մի տարուց յետոյ նրա մարմինը փոխադրուեց Թարխանա գիւղը. իսկ 1889 թւի օգոստոսի 16-ին բացւեց նրա փառաւոր արձանը Պետերբուրգի քաղաքում: Արդ՝ այսօր չարաբաստիկ մեծ պօէտի մահւան յիսնամեայ տարեդարձն է ու նրա գրական աշխատութիւնների իսպառ հասարակութեան սեպհականութիւն դառնալու տարին:

Մ. Ի. Լերմօնտօվ
(մահւան յիսնամեակի առիթով).

ՄԱՐԳԱՐԷ

Սկսեալ այն օրից, երբ Հայրն երկնքում՝
Ինձ տուեց շնորհ մարգարէական,
Ընթեռնում՝ եմ՝ ես մարդերի աչքում՝
Նոցա շար հոգին ամբարշտութեան:

Ես այնուհետեւ սկսայ քարոզել
Սուրբ ուսմունք սիրոյ եւ ճշմարտութեան.
Ընկերքս բոլոր ինձ քարկոծ առնել
Վեր կացան իբրեւ կատաղած գազան:

Ցանեցի մոխիր ես գլխս վերայ,
Քաղաքներից դուրս փախայ հեռուր,
Անապատի մէջ ապրում՝ եմ՝ ահա
Աստծոյ սեղանից, իբրեւ թեւաւոր:

Այնտեղ, խորհրդով տեսչութեան վերին,
Հնազանդ է ինձ հողեղէն ստեղծուած.
Ունկնդիր են ինձ աստղեր երկնային,
Շողշողուն փայլով ուրախագգեստուած:

Բայց երբ դէպ քաղաք այն աղմկային
Լինում՝ է ուղղել իմ՝ շտապ քայլեր.
Այնտեղ ալեւորը ժպտմամբ անձնասէր,
Ասում՝են այսպէս երեխաներին.

„Նայեցէ՛ք ահա, օրինակ դա ձեզ,
Իւր հպարտութեամբ անհաւան էր մեզ.
Մեզ հաւատացնել տիմարը կամէր,
Թէ նորա շրթամբք Աստուած խօսում՝էր:

„Նայեցէ՛ք, տղայք, այդ մարդու վերայ
Խոժոռ ու նիհար, գունատ տեսութեամբ.
Տեսէ՛ք, ինչպէս մերկ եւ աղքատ է դա,
Դրանից փախչում՝են արհամարհութեամբ“:

(Հիւսիսափայլ 1863 թ.) — Մ. ՂԵՐՄՈՆՏՈՎ

ԱՇԸՂ-ՂԱՐԻԲ

(Լերմոնտովից)

Շատ վաղ Թիֆլիսում ապրում էր մի հարուստ թուրք. Տէրը ուել էր նրան շատ ոսկի, բայց ամենից թանգ էր նրա համար իր միակ դուստր Մահուլ Մեհերին: Գեղանի են աստղերը երկնքի վրայ, սակայն աստղերից էլ դէնը հրեշտակներն են աւելի աքանչելի. այդպէս էս Մեհերին գերազանց էր քան Թիֆլիսի բոլոր օրիորդները. կենում էր այդտեղ և խեղճ Աշըղ-Ղարիբը: Մարգարէն չէր պարգեւել նրան ոչինչ, բայց միայն մեծ սիրտ և երգելու շնորհք: Նւագելով սազի (դաշնակ-բամբիռ) վրայ և դրատելով Թուրքիստանի հին հերոսներին, նա յաճախում էր հարսանիքները ուրախացնելով հարուստներին և բախտաւորներին:

Մի հարսանիքում նա տեսաւ Մեհերին և նրանք իրար սիրեցին: Քիչ յոյս կար, որ Աշըղ-Ղարիբը կարողանար նրան առնել, ուստի թախծութիւն եկաւ նրա վրայ, ինչպէս թխպոտ ձմեռւայ երկնքի երեսը:

Եւ ահա նա մի անգամ խաղողի այգում պարկած քուն մտաւ, այդ ժամանակ անցնում էր Մեհերին իր ընկերուհիներով, որոնցից մինը յետ մնաց, տեսնելով քնած աշուղին, մօտեցաւ նրան և երգելով կանչեց. «Ի՞նչ ես քնել, վեր կաց, անմիտ, քո սիրուհին մօտ է գալիս»: Նա աչքերը բացաւ, բայց աղջիկը թռաւ, ինչպէս թռչնիկ: Մեհերին լսեց վերջինիս ձայնը և նրան յանդիմանեց: «Եթէ դու գիտենայիր, պատասխան տուաւ նա, թէ ում համար էի երգում, շնորհակալ կը լինէիր ինձանից. դա քո Աշըղ-Ղարիբն էր»: Տար ինձ նրա մօտ, ասաց Մեհերին և նրանք գնացին: Տեսնելով նրա ախուր դէմքը, Մեհերին նրան հարց ու փորձ արաւ և սփոփեց:—Ինչպէս չբարամեմ, պատասխանեց Աշըղ-Ղարիբը, ես քեզ սիրում եմ, բայց երբէք դու իմը չես լինիլ:—Խնդրիր իմ ձեռքը իմ հօրից, ասաց աղջիկը, նա կանէ մեր հարսանիքը ինչպէս վայել է իր հարստութեան և ինձ այնքան բաժինք կը տայ, որ երկուսիս էլ հերիք է:—Լաւ, պատասխանեց աշուղը, ընդունենք թէ Աւազ-աղան ոչինչ չի խնայիլ իր աղջկայ համար, բայց ով գիտէ, որ դու յետոյ չես նախատիլ ինձ, որ ես ոչինչ չեմ ունեցել և ամեն բանով քեզ եմ պարտական: Ո՛չ, սիրելի Մեհերի, ես ինձ խօսք եմ տուել, որ խոստանում եմ եօթը տարի թափառել աշխարհիս երեսին և հարստութիւն գտել կամ փչանալ հեռու անապատներում: Եթէ դու համաձայն ես այս բանին, եօթը տարուց յետոյ իմը կը լինես»: Աղջիկը համաձայնեց, բայց աւելացրաւ, որ եթէ նշանակած օրը չը վերադառնայ, նա Խուրշուտ-բէկի կինը կը լինի, որ վաղուց նրա համար խօսում է:

Աշըղ-Ղարիբը եկաւ մօր մօտ, առաւ նրա օրհնութիւնը, համբուրեց փոքրիկ քրոջը, ուսից կախեց մախաղը, յենուեց պանդխտական գաւազանին և մեկնեց Թիֆլիսից: Հազիւ հեռացել էր քաղաքից, ահա հասաւ նրան մի ձիաւոր, նայեց որ Խուրշուտ-բէկն է. բարի ճանապարհ, կոչեց բէկը, ուր որ էլ գնաս, ով պանդուխտ, ես քո ընկերն եմ: Աշուղն ուրախ չէր այս պատահմունքին, բայց ինչ արած: Երկար ժամանակ նրանք միասին գնացին, վերջապէս իրանց առաջը մի գետ տեսան, որ կամուրջ չունէր: Լող տուր առաջ, ասաց Աշըղ-Ղարիբին, ես կը հետեւեմ քեզ:

Աշուղը հանեց վերնաշորերը և լողաց, անցաւ միւս ափը, յետ նայեցաւ, աւաղ, ի՞նչ տեսաւ, ամենակարող Աստուած, Խուրշուտ-բէկն առաւ նրա հագուստը և յետ դարձաւ Թիֆլիս. միայն փոչին էր երեւում նրա ետեւից որ օձանման պտտում էր:—Քաղաք ժամանելով բէկը Աշուղի շորերը բերում է նրա ծեր մօր մօտ և ասում է. քո որդին խեղդուեց խոր գետում, ահա նրա հագուստը: Անասելի կսկիծի մէջ ընկաւ մայրը նրա զգեստի վրայ և ջերմ արցունքով ողողեց նրան ու վերցրաւ տարաւ նրա նշանածի Մեհերի մօտ և ասաց. իմ որդին խեղդուել է. Խուրշուտ-բէկը բերել է նրա շորերը, դու ազատ ես: Մեհերին ժպտաց և պատասխանեց. մի հաւատա, այդ բոլորը Խուրշուտ-բէկի խաղերն են, եօթ տարին չը լրացած, ոչ ոք իմ ամուսինը չի լինիլ: Նա վերցրաւ պատից կախած սազը և սկսեց նւագել խեղճ Աշըղ-Ղարիբի սիրած երգը:

Իսկ մեր ուղեորը բոբիկ ու մերկ մտաւ մի դիւղ-

բարի մարդիկ հաղորդին և կերակրեցին նրան, փոխարէնը նա նւագից հրաչալի երգեր. այդպիսով նա անցաւ քաղաքից քաղաք, գիւղից գիւղ և նրա հռչակը սփռւում էր ամէն տեղ։ Վերջապէս հասաւ նա Հալապ. ըստ իր սովորութեան, մտաւ սրճանոց, առաւ սազը և սկսեց երգել. Այդ միջոցին ապրում էր Հալապում մի փաշա, որ աշուղների սիրահար էր. շատերին էլ նա լսել, բայց ոչ մէկը նրան դիւր չէր եկել, նրա սուրհանդակները յոգնել էին ման գալուց. յանկարծ նրանք սրճանոցի մօտով անցնելիս լսեցին մի աքանչելի ձայն, ներս մտան և գուշեցին. «Եկ մեզ հետ մեծ փաշի մօտ, ասա թէ ոչ գլուխդ կը թռցնենք»։—Ես ազատ եմ, ասաց Աշուղ-Դարիբը, Թիֆլիսեցի պանդուխտ մարդ եմ, կուզեմ կերթամ, կուզեմ ոչ, երգում եմ, երբ կամենում եմ, ձեր փաշան իմ մեծաւորը չէ։

Սակայն չընայելով դրան, բռնեցին նրան և բերին փաշի մօտ. երգիր, ասաց փաշան. և նա նւագեց ուրիր երգի մէջ դրւատում էր իր թանկագին Մեհերին. երգն այնքան հաւանեց փաշան, որ խեղճ Աշուղ-Դարիբին պահեց իր մօտ. թափւում էին նրա առաջ ոսկի և արծաթ. պսպղում էին նրա վրայ պերճ զգեստներ։ Ուրախ և բախտաւոր ապրում էր Աշուղ-Դարիբը, և չատ հարստացաւ։

Մոռացել էր նա իր Մեհերին թէ չէ, չըգիտեմ, միայն նշանակած ժամանակը լրանալու վրայ էր։ Գեղանի Մեհերին սկսել էր յուսահատուել։ Այդ ժամանակ Թիֆլիսից մի վաճառական ուղեւորւեց քառասուն ուղտի և 80 սարուկների մի քարաւանով։ Մեհերին կանչեց վաճառականին և ասաց. առ այս ոսկէ սկուտեղը և ինչ քաղաք որ մտնես, կախ տուր քո խանութում, ով որ տէր դուրս կը գայ դրան և կը հաստատի, նրան կը տաս, բացի այդ դրա քաշովը մին ոսկի էլ կըտաս։ Վաճառականը ճանապարհ ընկաւ և ամէն տեղ կատարում էր այս պատւէրը, բայց ոչ ոք չըյայտնւեց ոսկէ սկուտեղին տէր. նա արդէն ծախել էր գրեթէ իր բոլոր ապրանքը, երբ հասաւ Հալապ և յայտարարեց Մեհերիի յանձնարարութիւնը։ Այդ լսելով Աշուղ-Դարիբը վազեց եկաւ քարաւանսարան և տեսնում է ոսկէ սկուտեղը Թիֆլիսեցի վաճառականի խանութում։ «Այս իմն է», բռնեց և ասաց նա։ Իսկ որ քոնն է, Աշուղ-Դարիբ, ասաց վաճառականը, ես քեզ ճանաչեցի. դէ՛ չուտով գնա Թիֆլիս. քո Մեհերին հրամայել է ասել քեզ, որ ժամանակամիջոցը լրանում է և եթէ դու ժամադրած օրին այնտեղ չես լինիլ, նա ուրիշ մարդու կերթայ։ Յուսահատ աշուղը ջուխտ ձեռով դրուխը բռնեց, որովհետև երեք օր էր մնացել մինչև օրհասական ժամը։ Այնու ամենայնիւ նա ձի հեծաւ, վերցրաւ հետը մի քսակ լիքը ոսկով և քշեց, չընայելով ձիուն։ Վերջապէս յոգնատանջ երիվարը անչունչ տապաստ ընկաւ Երզնկայի սարի վրայ, որ Երզրումի մօտ է և այդտեղից Թիֆլիս երկու ամսւայ ճանապարհ է, բայց մնացել էր միայն երկու օր։ «Ամենակարող Աստուած, եթէ դու ինձ չօգնես, երկրիս երեսին էլ ինձ գործ չըկայ մնալու», բացականչեց Աշուղ-Դարիբը։ Եւ կամենում էր նա վայր ընկնել մի բարձր սեղացած ժայռից, յանկարծ տեսնում է ներքև մի մարդ ճերմակ ձիու վրայ նստած և լսում է մի խրոխտ ձայն. «Ո՛վ պատանի, ի՞նչ ես ուզում անել». —Ուզում եմ մեռնել, պատասխանեց Աշուղը։ —Ուրեմն իջիր քարափից ցած, եկ իմ ետեւից, գոռոզ կերպով ասաց ձիաւորը։ «Ի՞նչպէս կարող եմ քո ետեւից գալ, պատասխանեց Աշուղը, քո ձին սլանում է ինչպէս քամին, իսկ ես ծանրաբեռնւած եմ պարկով»։—Ուղիղ է, դէ կախիր քսակդ ձիուս դաւակից. դու էլ հետեւիր։ Աշուղ-Դարիբը յետ մնաց, ինչքան էլ որ աշխատում էր վազել։—Ի՞նչ ես յետ մնում, ասաց ձիաւորը։—Ինչպէս կարող եմ հետեւել քեզ, քո երիվարը թռչում է մտքից արագ, իսկ ես արդէն ջարդւած եմ։—Ճշմարիտ է, հեծիր դաւակս և ուղիղն ասա, ո՞ւր ես գնում։

«Դէթ Երզրում հասնեմ հիմա, պատասխանեց Աշուղը։—Ուրեմն խփիր աչքերդ. նա ծածկեց. հիմա բաց. մտիկ է անում Դարիբը, նրա առաջ սպիտակին են տալիս Երզրումի պարիսպները և փայլում են մինարէները։ «Ներողութիւն, տէր, ասաց Աշուղը, ես սխալւել եմ, կամեցել էի ասել ինձ պէտք է Դարս լինել։»—Տեսար որ ես քեզ նախազգուշացրի, ասաց ձիաւորը, որ դու ինձ ճիշտն ասես. փակիր ուրեմն աչքերդ, էլի բաց. աշուղը չի հաւատում աչքերին նա արդէն հասել է Դարս։ Նա ծունկ չոքեց և ասաց. «Ներողութիւն, տէր, դու ինքդ գիտես, որ եթէ մի մարդ առաւօտից սկսում է սուել, պէտք է մինչև երեկոյ չարունակի. ինձ իսկապէս հարկաւոր է Թիֆլիս լինել։—Ի՞նչ ծուռ մարդ ես, ասաց ձիաւորը բարկացած, ինչ արած, էլի ներում եմ քեզ. փակիր աչքերդ, դէ՛ բաց, աւելցրաւ նա մի երկու վայրկենից յետոյ։ Աշուղը ուրախութիւնից ճչաց, նրանք Թիֆլիսի դուռների մօտն էին։ Իր խորին չնորհակալութիւնը յայտնելով և վերցնելով իր պարկը ձիու դաւակից, Աշուղն ասաց սուրհանդակին. «Տէր, քո արած բարութիւնը մեծ է. բայց էլ աւելին արա. եթէ ես ասեմ որ մի օր Երզընկայից Թիֆլիս եմ հասել, ինձ ոչ ոք չի հաւատալ, ինձ նշան տուր ապացոյցի համար։—Խոնարհւիր, ասաց նա ժպտալով, վեր առ ձիու սմբակի տակից մի բուռը հող և դիր ծոցումդ, և երբ չեն հաւատալ քո խօսքերի ճշմարտութեանը, այն ժամանակ կանչիր քեզ մօտ եօթն տարւայ մի կոյր, որի աչքերին կը քսես հողը և նա կը տեսնի։ Աշուղը վերցրեց ձիու սմբակի տակից մի բուռը հող, դլուխը բարձրացաւ, ձին և ձիաւորը անհետացել էին եղել։ Այն ժամանակ նա հոգով համոզւեց, որ իր խնամակալը ուրիշ ոք չէր, եթէ ոչ Խդրլեզը, որ է Ս. Գէորգը։

Երեկոյեան ուշ միայն Աշուղ-Դարիբը իր տունը գտաւ։ Բաղխում է նա դողդոջուն ձեռքով դուռը և ասում է. մայրիկ, բաց արա, ես Աստծու հիւրն եմ, ծարաւ եմ և քաղցած, խնդրում եմ, քո թափառական որդու սիրոյ համար, թող ներս մտնեմ։

Պառաւի թոյլ ձայնը պատասխանեց նրան. «Օթեւանելու համար կան հարուստների և հզօրների տներ. հիմա քաղաքում հարսանիք կայ, գնա, այնտեղ, կարող ես գիշերը անց կացնել զւարճութեան մէջ»։—Մայրիկ, վրայ բերաւ որդին, ես այստեղ ոչ մի ծանօթ չունեմ, կրկնում եմ խնդիրս, քո թափառական որդու սիրոյ համար, ներս թող ինձ։ Այն ժամանակ բոյրն ասում է մօրը. մայրիկ, ես վեր կը կենամ և կը բանամ դուռը։ Անպիտան, պատասխանում է պառաւը, դու ուրախ ես հրիտասարդներին ընդունելու և հիւրասիրելու, իսկ ես ահա արդէն օթն տարի է, որ արտասուքից կորցրել եմ աչքիս լոյսը։ Բայց աղջիկն ուշ չըդարձնելով մօր յանդիմանութեանը, հլաւ, բաց արաւ դուռը և ներս մտցրաւ Աշուղ-Դարիբին։ Սովորական ողջոյնը տալով, նա նստեց և գաղտուկ յուզմունքով չորս կողմը աչքի էր անցնում։ Եւ տեսնում է, պատից կախ է թղթոտած պատեանի մէջ իր քաղցրաձայն սազը և սկսեց թախանձել մօրը. «Այն ինչ է պատից կախած։—Ինչ հետաքրքիր հիւր ես, պատասխանեց

Худож.- Лит. Р. Шахбазянца

Լերմոնտովի մահուան յիսունամեակի առիթով

պառաւը, հերիք է, որ քեզ կը տան մի կտոր հաց և վազը Աստուած քեզ հետ ասելով՝ ճանապարհ կը դնեն։—Ես արդէն քեզ ասացի, վրայ բերաւ որդին, որ դու իմ ծնող մայրն ես, սա էլ իմ հարազատ քոյրն է, ուստի խնդրում եմ ինձ բացատրէք այն ի՞նչ է պատից կախ արած։ Սազ է, սազ, պատասխանեց պառաւը բարկացած։—Ի՞նչ է նշանակում սազ։—Սազ ասածը այնպիսի բան է, որի վրայ նւագում են և երգում։ Եւ խնդրում է Աշըղ-Ղարիբը, որ թոյլ տայ քրոջը վեր բերել սազը և ցոյց տալ նրան։—Անկարելի է, ասաց պառաւը, այդ իմ դժբախտ որդու սազն է, ահա եօթ տարի է կախուած է պատից և ոչ ոքի ձեռը նրան չի դիպել։ Այն ժամանակ աշուղը աչքերը դէպի երկինք դարձրեց և այսպիսի աղօթք արեց. «Ո՜վ ամենակարող Աստուած, եթէ ես պիտի իմ նպատակիս հասնեմ, իմ սազը կը լինի այնպէս լարուած, ինչպէս որ վերջին անգամ ես նրա վրայ ածել եմ»։ Եւ նա զարկեց պըզընձէ լարերին և լարերը դաշն կերպով հնչեցին ու սկսեց երգել. ես խեղճ, զարիբ եմ, իմ բառերն էլ են խղճուկ, բայց Ս. Գէորգն օգնեց ինձ իջնել սեպացած քարափից, թէպէտ ես խեղճ և իմ բառերն էլ խղճուկ են, սակայն ճանաչիր ինձ, մայր իմ, և ընդունիր պանդխտին։ Դրա վրայ մայրն հեկեկաց և հարցրեց, ի՞նչ է քո անունը։—Բաշիդ (պարզ սիրտ) է, պատասխանեց նա։ Մի անգամ խօսիր, Բաշիդ, միւս անգամն էլ լսիր, ասաց մայրը, քո երգով իմ սիրտը կտոր-կտոր արիր. այս գիշեր ես երազում տեսնում էի, որ գլխիս մազերը սպիտակում էին. ահա եօթ տարի է, որ արտասուքից կուրացել եմ, ասա դու ինձ, երբ կը գայ իմ որդին, դու նրա ձայնն ունես։ Եւ լաց լինելով երկու անգամ կրկնեց նա իր խնդիրը։ Զուր էր հաւատացնում որդին, որ ինքն է, բայց պառաւը չէր հաւատում։ Քիչ յետոյ որդին ասաց, թոյլ տուր, մայրիկ, վերցնեմ սազը և գնամ. ես լսել եմ, այստեղ մօտիկ հարսանիք կայ. քոյրս հետս կը գայ, ես կերգեմ և կը նւագեմ, ինչ վաստակեմ, ձեզ հետ կը կիսեմ։—Չեմ թոյլ տալ, պատասխանեց պառաւը, քանի իմ որդին չըկայ. նրա սազը տանից դուրս չի եկել։ Որդին երգւում էր, որ ոչ մի լարը չի վնասի, իսկ եթէ մի լարն անգամ կտրւի, ասաց աշուղը, իմ բոլոր կայքը թող քոնը լինի։ Պառաւը չօշափեց նրա պարկը և տեսաւ որ լիքն է ոսկով, արձակեց նրան։ Քոյրը նրան տարաւ մինչև հարուստի տունը, ուր հարսանիք կար և դռան մօտ սպասեց, որ լսէ, տեսնէ թէ ինչ կը լինի։

Այդ տանը կենում էր Մեհերին և այդ գիշեր նա պիտի Խուրշուտ-բէկի կինը դառնար, իսկ Մեհերին առագաստի ետևը նստած իր ընկերուհիների հետ, մի ձեռքում բռնել էր թոյնը, միւսում սուրը. նա երդւել էր նախ քան Խուրշուտի հետ առագաստ մտնելը մեռնել, և լսեց նա վարագոյրի ետևից, որ մի օտարական է եկել, որն ասում էր, բարի ողջոյն ձեզ, դուք այստեղ ուրախութիւն էք անում և ճաշկերոյթ, թողէք որ ես պանդուխտս էլ ձեզ հետ նստեմ, փոխարէնը երգ կը նւագեմ։—Ինչու չէ, նստի, ասաց Խուրշուտ-բէկը։ Այստեղ պէտք է երգասացներ, պարողներ լինին, հարսանիք է, երգիր, աշուղ, ես քեզ մի բուռը լիքը ոսկով ճանապարհ կը դնեմ։

Այն ժամանակ Խուրշուտ-բէկը հարցրաւ, ի՞նչպէս է քո անունդ, ով ճամբորդ։

—Իմ անունս է Շինդի-գեօրսզ (հիմա կը տեսնէք)։ «Այդ ինչ տեսակ անուն է», բացականչեց նա ծիծաղելով, առաջին անգամն եմ լսում։—Երբ իմ մայրը յղի էր ինձնով և ծննդականի ցաւերն էր քաշում, շատ հարևաններ գալիս էին դռան մօտ և հարցնում, աղա՞յ թէ աղջիկ է տւել Աստուած։ Նրանց պատասխանում էին, Շինդի-գեօրսզ. այդ պատճառով, երբ ես ծնւեցի, այդ անունը դրին ինձ։ Սրանից յետոյ նա վերցրաւ սազը և սկսեց այսպէս երգել.

—Հալապ քաղաքում ես խմում էի Մըսըրի դինի, բայց Աստուած ինձ թևեր տւաւ և ես երեք օրում հասայ այստեղ։

Խուրշուտ-բէկի եղբայրը, որ պակասամիտ մարդ էր, հանեց թուրը և կոչեց. դու սուտ ես ասում, մի՞թէ երեք օրում Հալապից այստեղ կարելի է գալ։

—Ինչու ուզում ես ինձ սպանել, ասաց աշուղը, երդիչներն ամեն կողմից հաւաքւում են մէկ տեղ, կուզէք հաւատաք, կուզէք մի հաւատաք, ես ձեզանից ոչինչ չեմ վերցնիլ։

—Թող շարունակէ, ասաց փեսացուն և Աշըղ-Ղարիբը երգեց նորից.

«Առաւօտեան նամազս կատարեցի Երզնկայի հովիտում, կէս օրւանը Էրզերում, արև մայր մտնելից առաջ նամազ արի Կարս, իսկ երեկոյեան Թիֆլիսում։ Աստուած ինձ թևեր տւաւ և ես հասայ այստեղ, թող տայ Աստուած, որ ես զոհ լինիմ սպիտակ ձիուն. նա վազում էր արագ, սարից ձոր, ձորից սար. Տէրը տւաւ աշուղին թեւեր և նա եկաւ հասաւ Մեհերի հարսանիքին։

Այն ժամանակ Մեհերին ճանաչելով նրա ձայնը, թոյնը մի կողմը դէն ձգեց, թուրը մի կողմը։—Ուրեմն դու քո տւած երդումդ դրժեցիր, ասացին ընկերուհիները, այս գիշեր դու Խուրշուտի ամուսինը կը լինիս։ Դուք չը ճանաչեցիք, իսկ ես ճանաչեցի ինձ սիրելի ձայնը, պատասխանեց Մեհերին և վերցնելով մկրատը, պատռեց վարագոյրը ու նայեց և ճանաչեց իսկ որ Աշըղ-Ղարիբն էր. ուրախութիւնից ճչաց և վազեց փարեց նրա վզով ու երկուսն ուշները գնացած վայր ընկան։ Խուրշուտ-բէկի եղբայրը վրայ պրծաւ սուրը ձեռին, որ նրանց մորթէ, բայց բէկը կանգնեցրեց նրան ասելով, հանդարտուիր և իմացիր, որ ինչ մարդուս ճակատին գրւած է նրա ծնւելու օրը, նրանից չի կարող խոյս տալ։

Ուշքի գալով Մեհերին, կարմրեց ամօթից և ձեռքով երեսը ծածկելով՝ թագնւեց առագաստի ետևը։

—Ճիշտ որ դու Աշըղ-Ղարիբն ես, ասաց փեսացուն, միայն պատմիր, թէ ինչպէս կարողացար այդքան կարճ միջոցում այդչափ մեծ տարածութիւն անցնել։

Ճշմարտութիւնը ձեզ ապացուցանելու համար, պատասխանեց Աշուղը, իմ թուրը քար կը կտրի, եթէ ես սուտ ասեմ, թող իմ վիզը մազի պէս բարակի։ Բայց աւելի լաւ է իմ մօտ բերէք մի կոյր, որ եօթ տարի է բան չի տեսել, ես նրա աչքերը բաց կանեմ։ Աշըղ-Ղարիբի քոյրըն այս խօսքերը լսելով, վազեց մօր մօտ և ասաց. «Մայրիկ, նա իսկ որ իմ եղբայրն է և քո որդի Աշըղ-Ղարիբն է, և պառաւի ձեռքից բռնելով, բերաւ նրան հարսանիքի խնճոյքը։ Այն ժամանակ Աշուղը հանեց ծոցից մի բուռ հողը, ցեխ արաւ ջրով, քսեց մօր աչքերին ասելով. իմացէք, ով մարդիկ, ինչպէս մեծ և հզօր է Ս. Գէորգը. և նրա մայրը աչքերը բացաւ և տեսաւ։ Դրանից յետոյ ոչ ոք չէր կասկածում նրա խօսքերի ճշմարտութեան և Խուրշուտ-բէկը սիրով յանձնեց նրան գեղանի Մեհերին։

Այդ ժամանակ Աշըղ-Ղարիբն ասաց. ես քեզ կը սփո-

փեմ, Խուրշուտ-բէկ, իմ քոյրը պակաս չէ քո առաջւայ հարսնացւից. ես հարուստ եմ, նա էլ պակաս ոսկի արծաթ չի ունենալ, ա՛ռ նրան և նրա հետ բախտաւոր եղէք այնպէս, ինչպէս ես իմ թանգագին Մեհերիս հետ։

Ն. Տ.-ԱԻԵՏԻՔԵԱՆ

ՆԱԽԸՆԹԱՑ ՕՐԸ

(Տուրգենեւ)

IV

—Գնանք հաց ուտենք, գնանք,—նւազ ձայնով ասաց տանտիրուհին, և ամենքը մտան սեղանատուն։—Նստեցէք ինձ մօտ, Zoé,—խօսեց Աննա Վասիլեվնան,—իսկ դու Heléne զբաղեցրու հիւրին, եկ դու Paul, խնդրեմ չարութիւն չանես, չբարկացնես Zoé-ին։ Այսօր գլուխս ցաւում է։ Շուբինը դարձեալ աչքերը բարձրացրեց դէպի երկինք։ Zoé-ն թեթև կերպով ժպտաց։

Այդ Zoé-ն, կամ, աւելի ճիշտ, Zoè Նիկիտիշնա Միլլէրը մի սիրունատես ռուս-գերմանուհի էր, երկուսի բաժանւած քթածայրով, կարմիր ու փոքրիկ շրթունքներով, մի շիկահեր և փափլիկ օրիորդ։ Նա շատ յաջող երգում էր ռուսերէն բօմանսներ, նուրբ կերպով ածում էր դաշնամուրի վրայ՝ զանազան թէ ուրախ և թէ տխուր եղանակներ։ Նա հագնւում էր ճաշակով, չափից դուրս մաքուր, բայց մի քիչ երեխայական ձևով։ Աննա Վասիլեվնան այդ օրիորդին ընդունել էր իր տանը, որպէս իր դստերը ընկերուհի, սակայն միշտ նրան իր մօտ էր պահում։ Ելէնան այդ մասին չէր տրանջում. նա բոլորովին չէր իմանում թէ ինչ խօսի Զօեայի հետ երբ նրանք պատահմամբ առանձին էին մնում։ Ճաշը բաւական երկար տևեց։ Բերսէնեվը խօսում էր Ելէնայի հետ. համալսարանական կեանքի, իր դիտաւորութիւնների և յոյսերի մասին։ Շուբինը լուռ ականջ էր դնում, սաստիկ ագահութեամբ ուտում էր, և երբեմն իր կոմիկական տխուր հայեացքը ուղղում էր դէպի Զօեան, որը միշտ պատասխանում էր նրան իր սովորական ժպտով։ Ճաշից յետոյ Ելէնան՝ Բերսէնեվի և Շուբինի հետ միասին գնաց պարտէզ։ Զօեան նայեց նրանց ետևից, մի թեթև ա՛խ քաշեց և նստեց դաշնամուրի առաջ։—Ինչո՞ւ դուք էլ չէք գնում զբօսնելու,—խօսեց Աննա Վասիլեվնան և, առանց սպասելու նրա պատասխանին՝ աւելացրեց.—ածեցէ՛ք ինձ համար մի տխուր բան։

—La dernière pensée de Weber?—հարցրեց Զօեան։

—Ա՛խ, հա՛, Վէբերից,—խօսեց Աննա Վասիլեվնան, ընկաւ բազկաթոռի մէջ և արտասուքի կաթիլը երևաց նրա աչքում։

Այն ինչ Ելէնան, երկու երիտասարդներին տարաւ ակացիաներից կազմւած տաղաւարը, որի մէջ տեղում դրւած էր մի փայտեայ սեղան և նրա շուրջը նստարաններ։ Շուբինը չորս կողմ նայեց, մի քանի անգամ թրռչկոտեց ոտների վրայ, և փափսալով ասաց. „Սպասեցէք“, վազեց իր սենեակը, բերեց մի կտոր կաւ ու սկսեց շինել Զօեայի կերպարանքը՝ հետն էլ ծամածռւել, փնթփնթալ ու քթի տակ ծիծաղել։

—Դարձեա՛լ հին կատակները,—ասաց Ելէնան, նայելով նրա աշխատանքին և երեսը դարձրեց դէպի Բերսէնեվը, որի հետ շարունակում էր ճաշի վրայ սկսւած խօսակցութիւնը։

—Հին կատակնե՛ր,—կրկնեց Շուբինը։—Նիւթը սաստիկ առատ է, մանաւանդ այսօր նա ինձ համբերութիւնից հանեց։

—Ինչո՞ւ,—հարցրեց Ելէնան։—Կարծես դուք խօսելիս լինիք մի չար և այլանդակ պառաւի մասին. նա գեղեցիկ, մատաղահաս աղջիկ է...

—Ի հարկէ,—ընդհատեց Շուբինը՝—նա գեղեցիկ է, գրաւիչ, ես հաւատացած եմ, որ ամեն տեսնող կասի նրա համար. „ա՛յ դրա հետ կարելի է... պօլկա կաքաւել“։ Նա ինքն էլ այդ զգում է և ներքուստ ուրախ է։ Հապա ինչի՞ համար է այդ կեղծ պարկեշտութիւնը։ Դուք լաւ գիտէք, թէ ի՞նչ եմ ուզում ասել,—աւելացրեց նա քթի տակ։—Բայց դուք այժմ ուրիշ բանով էք զբաղւած։

Եւ արորելով Զօեայի կերպարանքը, Շուբինը նորից սկսեց ձեռքի մէջ շաղաղել ու ճմրել կաւը։

—Ուրեմն դուք կը ցանկանայիք պրօֆեսօր լինե՞լ,—հարցրեց Ելէնան Բերսէնեվին։

—Այո՛,—պատասխանեց նա, ծնկների մէջ սեղմելով իր կարմիր ձեռները։—Այդ իմ գուրգուրած մտածմունքն է։ Ի հարկէ, ես լաւ գիտեմ, թէ ինչեր դեռ պակասում են ինձ՝ այդպիսի բարձր կոչման արժանանալու։ Ուզում եմ ասել, որ ես դեռ շատ քիչ եմ պատրաստուած, բայց յոյս ունեմ, որ իրաւունք կըստանամ արտասահման գնալու. կըմնամ այնտեղ երեք-չորս տարի, եթէ հարկ եղաւ և այնուհետև...—Նա կանգ առաւ, աչքերը ցած գցեց, յետոյ արագութեամբ գլուխը բարձրացրեց և անտեղի ժպտալով՝ մազերը դրստեց։ Կանանց հետ խօսելիս Բերսէնեվը դանդաղ էր արտասանում բառերը և նրա ձայնը ցածրանում էր։

—Դուք ուզում էք պատմութեա՞ն պրօֆեսօր լինելու,—հարցրեց Ելէնան։

—Այո՛, պատմութեան, կամ փիլիսոփայութեան,—աւելի ցած ձայնով խօսեց նա,—եթէ յաջողւի։

—Նա հէնց այժմ էլ սատանի պէս ճարպիկ է փիլիսոփայութեան մէջ,—նկատեց Շուբինը եղունգներով խոր-խոր գծեր քաշելով կաւի վրայ,—արտասահման գընալն էլ ինչի՞ն է պէտք։

—Եւ դուք լիովին բաւակա՞ն կը լինիք ձեր դրութիւնից,—հարցրեց Ելէնան, ուղիղ նայելով նրա երեսին։

—Լիովին, Ելէնա Նիկօլայեվնա, լիովին. դրանից էլ ի՞նչ բարձր կոչում, գնալ Տիմօֆէյ Նիկօլայեվիչի շաւղով... Այդպիսի գործունէութեան մասին երևակայելն անգամ ինձ անչափ ուրախացնում և վրդովում է... այո՛... վրդովում, որովհետև ես զգում եմ իմ ոյժերի սակաւութիւնը։ Հանգուցեալ հայրս ինձ օրհնել է այդ գործի համար... Ես երբէք չեմ մոռանալու նրա վերջին խօսքերը։

—Ձեր հայրը այս ձմե՞ռ վախճանեցաւ։

—Այո՛, Ելէնա Նիկօլայեվնա, փետրւար ամսին։

—Ասում են,—շարունակեց Ելէնան,—նա թողել է մի երևելի ձեռագիր շարադրութիւն, ուղի՞ղ է։

—Այո՛, թողել է. նա մի հրաշալի մարդ էր։ Դուք կը սիրէիք նրան, Ելէնա Նիկօլայեվնա։

—Չեմ կասկածում... բայց ի՞նչ է այդ շարադրութեան նիւթը։

—Այդ շարադրութեան նիւթը, Ելէնա Նիկօլայեվնա, դժւար է մի քանի խօսքով ձեզ բացատրել։ Իմ հայրը շատ գիտնական մարդ էր, «շէլլինգական» էր, նրա գործածած խօսքերը և դարձւացքները այնքան պարզ չեն...

—Ներեցէ՛ք, Անդրէյ Պետրօվիչ, իմ ագիտութեանը,—

ընդհատեց Ելէնան,—ի՞նչ է նշանակում շէլլինգական։

Բերսէնեվը թեթև ժպտաց։

—Շէլլինգական նշանակում է գերմանացի փիլիսոփայ Շէլլինգի վարդապետութեանը հետևող, իսկ թէ ինչ՞ումն է կայանում Շէլլինգի վարդապետութիւնը...

—Անդրէ՛յ Պետրովիչ,—յանկարծ բացականչեց Շուբինը, ի սէր Աստուծոյ, չըլինի՞ ուզում ես Ելէնա Նիկոլայեվնային դասախօսութիւն կարդալ Շէլլինգի մասին, խնայի՞ր։

—Ի՞նչ դասախօսութիւն,—մրմնջաց Բերսէնեվը ու կարմրեց,—ես ուզում էի...

—Ի՞նչ կայ, թէկուզ դասախօսութիւն,—վրայ բերեց Ելէնան,—ինձ և ձեզ շատ օգտակար են դասախօսութիւնները, Պավել Եակովլեվիչ։

Շուբինը նայեց, նայեց և յանկարծ բարձր ծիծաղեց։

—Ինչի՞ վրայ էք ծիծաղում,—սառը և համարեա խիստ կերպով հարցրեց Ելէնան։

Շուբինը լռեց։

—Դէ՛հ, բաւական է, մի՞ք բարկանալ,—խօսեց նա քիչ յետոյ։ Ես մեղաւոր եմ։ Բայց, Ճշմարիտ, ախը ի՞նչ ժամանակ է, այժմ, այս եղանակին այս ծառերի տակ, ճառել փիլիսոփայութեան մասին։ Աւելի լաւ է խօսել սոխակների, վարդերի, գեղեցիկ աչքերի և ժպիտների մասին։

—Այո՛, նաև Ֆրանսիական վէպերի, կանանց փալասների—շարունակեց Ելէնան։

—Ինչո՛ւ չէ, նոյնիսկ փալասների մասին,—պատասխանեց Շուբինը,—եթէ միայն դրանք գեղեցիկ են։

—Լա՛ւ, իսկ եթէ մենք չենք ուզում խօսել այդ բաների մասին։ Դուք ձեզ անւանում էք ազատասէր արւեստագէտ և ուզում էք բռնանալ ուրիշների ազատութեան վրա՞յ։ Եւ թոյլ տւէք ձեզ հարցնել. այդ գաղափարները ունենալուց յետոյ՝ էլ ինչո՞ւ էք նախատում Զօեային. նրա հետ մանաւանդ յարմար է խօսել վարդերի և կանանց փալասների մասին։

Շուբինը բռնկեց, վեր կացաւ նստարանից։—Հա՛, այդպէ՞ս,—սկսեց նա դողդոջուն ձայնով։—Ես հասկանում եմ ձեր ակնարկը, դուք ինձ ուղարկում էք նրա մօտ. ուրիշ խօսքով՝ ես այստեղ աւելորդ եմ։

—Ես չէի ուզում հեռացնել ձեզ այստեղից։

—Դուք ուզում էք ասել,—տաքացած շարունակեց Շուբինը, որ ես ուրիշ հասարակութեան արժանի չեմ, որ ես Զօեայի ընկերն եմ, որ ես նոյնպէս դատարկ, չնչին և յիմար եմ, որպէս այդ քաղցրահամ գերմանուհին։ Այդպէս չէ՞։

Ելէնան դէմքը խոժոռեց։—Դուք միշտ այդպէս չէիք խօսում նրա մասին, Պավել Եակովլեվիչ,—նկատեց նա։

—Ա՜, յանդիմանութի՞ւն, հիմա էլ յանդիմանութիւն,—բացականչեց Շուբինը։—Այո՛, ես չեմ ուրանում, եղել է բոպէ, միայն բոպէ, երբ այն թարմ և անարգ թշերը... Իսկ եթէ ես ուզենայի պատասխանել ձեզ նոյնպիսի յանդիմանութիւնով և յիշեցնէի... Ցտեսութի՞ւն,—աւելացրեց նա յանկարծ,—քիչ մնաց սուտ խօսէի։ Եւ խփելով իր շինած կաւէ գլխին, խկոյն դուրս վազեց ծառերի միջից և գնաց մտաւ իր սենեակը։

—Երեխա՛յ,—ասաց Ելէնան, մտիկ տալով նրա ետևից։

—Արտիստ է,—հանդարտ ժպիտով աւելացրեց Բերսէնեվը։—Բոլոր արտիստներն այդպէս են։ Պէտք է ներել նրանց քմահաճութիւնները. այդ նրանց իրաւունքն է։

—Այո՛,—պատասխանեց Ելէնան,—բայց Պա՛վելը դեռ չէ արժանացել այդ իրաւունքին։ Ի՞նչ է արել նա մինչև հիմա։ Տւէք ձեր թևը, գնանք այս ճեմելիքով։ Նա մեզ խանգարեց։ Մենք խօսում էինք ձեր հօր շարադրութեան մասին։

Բերսէնեվը տւեց Ելէնային իր թեւը և երկուսով դուրս ելան ծառուղիի վրայ։ Սակայն սկսւած և այնպէս շուտով ընդհատւած խօսակցութիւնը չընորոգւեց։ Բերսէնեվը նորից խօսեց պրօֆեսսօրական կոչման, իր ապագայ գործունէութեան մասին։ Նա դանդաղ և բաւական անշնորհ, իբրև անվարժ կավալեր, քայլում էր Ելէնայի հետ. երբեմն առաջ էր անցնում, երբեմն դիպչում նրան իր ուսով։ Եւ այդ բոլոր խօսակցութեան ժամանակ՝ ամենևին չընայեց նրա երեսին։ Բայց նրա խօսակցութիւնը հեշտ էր, եթէ ո՛չ բոլորովին ազատ։ Նա խօսում էր պարզ և ուղիղ։ Նրա աչքերում, որոնք դանդաղ թափառում էին ճանապարհի ծառերի և կանաչի վրայով՝ փայլում էր ազնիւ զգացմունքների խանդաղատանք։ Իսկ նրա հանդարտ ձայնի մէջ լսւում էր մի այնպիսի ուրախութիւն, որ յառաջացնում է մարդու մէջ այն ժամանակ, երբ նրան յաջողւում է արտայայտել իր հոգեկան զգացմունքները՝ իր թանկագին և պաշտելի էակի առաջ։ Ելէնան ուշադրութեամբ լսում էր Բերսէնեվին և երեսը նրան դարձրած՝ իր աչքերը չէր հեռացնում նրա գունաթափ դէմքից, նրա բարի և հեզ աչքերից, որոնք անդադար խուսափում էին Ելէնայի աչքերին հանդիպել։ Ելէնայի հոգին հրճւում էր և նրա մէջ լցւում, զարգանում էին քնքոյշ, սուրբ, ազնիւ զգացմունքներ...

V.

Շուբինը մինչև երեկոյ դուրս չեկաւ իր սենեակից։ Արդէն բոլորովին մթնել էր. բարձր երկնակամարի վրայ կանգնած էր կիսալուսինը. «ծիր կաթինը» երևում էր, աստղերը փայլփլում էին երկնքում։ Բերսէնեվը „մնաք բարեաւ» ասաց Աննա Վասիլեվնային, Ելէնային և Զօեային ու շտապով մօտեցաւ իր ընկերոջ դրանը։ Դուռը փակ էր. նա սկսեց բաղխել։

—Ո՞վ է,—լսւեց Շուբինի ձայնը։

—Ես եմ,—պատասխանեց Բերսէնեվը։

—Ի՞նչ ես ուզում։

—Դէ՛, բա՛ց դուռը, Պավել, հերիք է կամակորութիւն անես։

—Ես կամակորութիւն չեմ անում. ես քնած եմ և երազումս Զօեային եմ տեսնում։

—Թո՛ղ, թէ Աստուած կը սիրես, երեխայ չես, ամօթ չէ՞։ Բաց դուռը. ես ուզում եմ քեզ հետ խօսել։

—Բաւական չըխօսեցի՞ր Ելէնայի հետ, չըյոգնեցա՞ր։

—Լա՛ւ, լաւ, բաց արա՛։

Շուբինը սկսեց խռմփալ։ Բերսէնեվը զարմացած ուսերը վեր քաշեց և ճանապարհ ընկաւ դէպի տուն։ Ամառնային տաք գիշեր էր։ Ամեն տեղ տիրում էր լռութիւն, կարծես բնութիւնն ականջ էր դնում, հսկում էր։ Բնութեան յամր լռութիւնը ազդեց և Բերսէնեվի վրայ. նա ևս կարծես մի բանի ականջ էր դնում, սպասում էր։ Երբեմն ծառերի գագաթների վրայով անցնում էր թեթև զեփիւռը և նրա ձայնը, որ շատ նման էր կանանց մետաքսեայ շորերի ձայնին, գրգռում էր Բերսէնեվի մէջ քաղցր և ճնշող զգացմունքներ, վախի, սար-

Թիֆլիս քաղաքի ընդհանուր տեսարան

սոփի աղօտ զգացմունքներ։ Նրա մարմինը սարսուռ էր զգում, արտասուքի սառը կաթիլը թրջում էր նրա աչքերը. Նա այնպէս զգուշութեամբ առաջ էր գնում, կարծես ուզում էր չերևալ, պահուել... Սրընթաց զեփիւռը փչեց նրա ականջին, նա դողաց և անշարժ կանգնեց։ Քնաթաթախ բզէզը ծառից վայր ընկաւ Ճանապարհի վրայ։ Բերսէնեվը կամաց «ա՜հ» արեց և դարձեալ կանգ առաւ։ Յետոյ նա մտաբերեց Ելէնային և այդ բոլոր թռուցիկ զգացմունքները շուտով անհետացան, թողնելով նրա վրայ գիշերային զովի և զբօսանքի կենդանարար տպաւորութիւնը. երիտասարդ աղջկայ պատկերը գրաւեց նրա ամբողջ հոգին... Բերսէնեվը գլխակոր առաջ էր գնում՝ շարունակ մտաբերելով նրա խօսքերը, նրա հարցմունքները։ Յանկարծ նա լսեց արագ քայլերի ձայներ. կարծես մի մարդ նրա ետևեց վազում էր, աշխատում էր հասնել նրան։ Լսեց ընդհատուող, արագ շնչառութիւն և հաստ ծառի բարձր սաւերի միջից՝ անսպասելի կերպով դուրս թռաւ Շուբինը՝ բաց գլխով, գզգզուած մազերով, գունատ և տխուր դէմքի արտայայտութեամբ։

—Շատ ուրախ եմ, որ դու այս Ճանապարհով ես եկել,—դժւարութեամբ խօսեց նա։ Ամբողջ գիշերը չէի քնելու, եթէ քեզ չըհասնէի։ Տ՛ուր ինձ թևդ։ Դու խօ տ՞ուն ես գնում։

—Տուն եմ գնում։

—Ես կուղեկցեմ քեզ։

—Առանց գլխարկի՞։

—Ոչինչ, ես փողպատս էլ եմ քանդել. տաք է։

Բարեկամները մի քանի քայլ առաջ գնացին։

—Ես այսօր շատ յիմար գանուեցայ, այնպէս չէ՞,—հարցրեց յանկարծ Շուբինը։

—Ճշմարիտ ասած՝ այո՛, ես բոլորովին զարմացայ քեզ վրայ. երբէք քեզ չէի տեսած այդպէս։ Ախր ի՞նչ յիմար բանի համար բարկացար։

—Հա՛,—մրմնջաց Շուբինը,—դու այդպէս ես դատում, իսկ ես յիմարութեան ժամանակ չունիմ։ Տ՞ես թէ ինչ կայ. ես պիտի ուղիղն ասեմ... ես... ի՞նչ ուզում ես ասա՛... ես սիրահարուած եմ Ելէնայի վրայ։

—Սիրահարուա՞ծ ես Ելէնայի վրայ—կրկնեց Բերսէնեվը և կանգ առաւ։

—Այո՛,—ակամայ սառնութեամբ շարունակեց Շուբինը։—Այդ քեզ զարմացնո՞ւմ է։ Ես աւելին կասեմ, մինչև այս երեկոյ ես յոյս ունէի, թէ նա մի օր էլ ինձ կը սիրէ, սակայն այսօր համոզուեցայ, որ այլ ևս իզուր է յուսալը, նա ուրիշին է սիրում։

—Ուրիշի՞ն, ո՞ւմ։

—Ո՜ւմ։ Քեզ,—կոչեց Շուբինը, խփելով Բերսէնեվի ուսին։

—Ի՞նձ։

—Քեզ,—կրկնեց Շուբինը։

Բերսէնեվը զարմացած մնաց։ Շուբինը սուր հայեացքով նայում էր նրան։

—Եւ այդ քեզ զարմացնում է։ Թէև դու համեստ երիտասարդ ես, բայց նա քեզ սիրում է։ Այդ մասին դու կարող ես հանգիստ լինել։

—Ինչ ես յիմար յիմար դուրս տալիս,—տհաճութեամբ վերջապէս խօսեց Բերսէնեվը։

—Ոչ, յիմարութիւն չէ։ Սակայն ինչու ենք կանգնել։ Առաջ գնանք։ Քայլելիս աւելի հիշտ է խօսելը։ Ես Ելէնային վաղուց եմ ճանաչում, և լաւ եմ ճանաչում։ Այս բանում ես չեմ կարող սխալւել. դու նրան շատ յարմար ես։ Մի ժամանակ՝ ես էլ դուր էի գալիս նրան։ Բայց նախ որ՝ ես նրա համար չափազանց թեթևամիտ երիտասարդ եմ, իսկ դու լուրջ մարդ ես, դու բարոյապէս և Փիզիկապէս՝ մաքուր անձնաւորութիւն ես, դու...—սպասիր, ես դեռ չեմ վերջացրել. դու բարեխեղճ և բարեխառն էնդուղիաստ ես, ճշմարիտ ներկայացուցիչ գիտութեան այն քուրմերի, որոնցով,--ոչ, որոնցով չէ.-- „որովք" այնպէս իրաւամբ հպարտանում է ազնւական միջին դասակարգը։ Իսկ երկրորդ որ՝ Ելէնան անցեալ օր տեսաւ ինձ Զօեայի թևերը համբուրելիս։

—Զօյեայի՞։

—Այո, Զօեայի։ Ինչ արած՝ նրա ուսերն այնպէս գեղեցիկ են։

—Ուսե՞րը ։

—Ուսերը, թևերը՝ միևնոյն է։ Այդ անմեղ պարապմունքի մէջ ինձ տեսաւ Ելէնան ճաշից առաջ՝ ես նրա ներկայութեանը հայհոյել էի Զօեային։ Դժբախտաբար՝ հակասութիւնների բնական լինելը չի հասկանում Ելէնան։ Յետոյ դու լոյս ընկար. դու „հաւատում ես"....ի՞նչ բանի ես դու հաւատում։ Դու կարմրում ես, շփոթւում ես, խօսում ես Շիլլերի, Շիլլինգի մասին, նա էլ միշտ երևելի մարդիկ է որոնում և այդ պատճառով դու էլ յաղթեցիր, իսկ ես, թշուառս, շարունակ աշխատում եմ ծաղրածութիւններ անել և... և... Շուբինը սկսեց հեկեկալ, քաշւեց մի կողմ, նստեց գետնի վրայ և ձեռքերով պոկում էր իր մազերը։ Բերսէնեվը մօտեցաւ նրան.

—Պ.ճվել,--խօսեց նա,--այդ ի՞նչ ես անում. ի սէր Աստուծոյ, երեխայ ես, ի՞նչ ես։ Այսօր քեզ ի՞նչ է պատահել։ Չըզիտես ինչ յիմար-յիմար բաներ ես մտածում և լալիս։ Ճշմարիտ՝ ինձ թւում է, որ դու կատակ անում։

ԵՐ. ՂԱԶԱՐԵԱՆ

[Կըշարունակւի]

ԼԵՐՄՕՆՏՕՎԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Провозглашать я сталъ любви
И правды чистыя ученья;
Въ меня всѣ ближніе мои
Бросали бѣшено каменья.

Լերմօնտօվի—Пророкъ.

Վեհութեամբ լի մաքուր ոգիդ մանկական
Վաղ ըմբռնեց մարդկանց ոգու չարութիւն.
Եւ քո քնարն հնչեց երգեր աննման,
Վիշտն աշխարհի, լացն ու մաշող տխրութիւն։

Մարդկանց սրտում սէր փնտրելուց վհատած,
Քո վեհ ոգին պատռեց լեռներ, անդունդներ,
Երկրի ներսից քարշեց «Դեւին» հալածւած,
Որի սրտում դեռ չէր մեռած մաքուր սէր։

Պայծառ լուսոյ շամանդաղով վառվռուն
Երդւեց «Դեւը» լինել բարի յաւիտեան,
Սէրը նրան ներշնչեց երգ գալարուն,
Սէրը նրա մէջ սպանեց սերմ չարութեան։

Վշտի երգիչ, սիրոյ կարօտ նահատակ,
Մահ խնդրեցիր, չըվախեցար զնդակից.
Ամուր զրկած պօէտի սուրբ դրօշակ
Դու պատիւը նախապատւեցիր կեանքից։

Հ.

ԱՐՁԱԿ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

(Ի. Ս. Տուրգենւից)

IV

ԷԳՈՒՑ... ԷԳՈՒՑ...

Ինչպէս դատարկ է, և թոյլ, և ողորմելի համարեա ամեն անցկացած օրը...

Ինչպէս քիչ հետքեր է թողնում նա իր յետևից... ի՞նչպէս անմիտ, յիմարաբար անցան այս ժամերը՝ մէկ մէկու յետևից...

Եւ չընայած դրան՝ մարդ ցանկանում է գոյութիւն ունենալ, նա խնայում է իր կեանքը, նա մեծ յոյս ունի իր կեանքի վրայ, իր ապագայի վրայ...

Օ՜, ի՞նչպէս մեծ բարեփոխութիւններ է սպասում այդ ապագայից...

Բայց ինչու է նա երևակայում, որ միւս՝ դալիք օրերը՝ նման չեն լինիլ այս հազիւ անցած օրին...

Նա այդ չի էլ երևակայում։ Նա առհասարակ չի սիրում մտածել—և լաւ էլ է անում։

—Ահա, «էգուց»... էգուց...»—մխիթարում է նա իրան, մինչև այդ «էգուցը» կըգլորէ նրան գերեզման։

Իսկ եթէ գերեզման ընկար—ակամայ կըգադարես մտածել։

V

ԹՂԹԱԿԻՑ

Երկու բարեկամ նստած սեղանի մօտ թէյ էին խմում։

Յանկարծ փողոցում բարձրացաւ անսպասելի աղաղակ։ Լսելի էին լինում ողբագին հառաչանքներ, չարագին հայհոյանքներ, չարախնդաց ծիծաղ ու քրքիջներ։

—Ում որ ծեծում են,—նկատեց ընկերներից մէկը, նայելով լուսամուտից դուրս։

--Յանցաւորի՞։—Մարդասպանի՞,—հարցրեց միւսը։

—Լսի՞ր՝ ով որ ուզում է նա լինի, էլի չի կարելի թոյլ տալ, որ այդպէս ինքնագլուխ դատապարտեն նրան։ Գնանք, պաշտպանենք նրան։

—Բայց նրանք մարդասպանի չեն ծեծում։

—Մարդասպան չէ, կարելի գող է։ Բոլորը մէկ է, գնանք, ազատենք նրան ամբոխի ձեռքից։

—Նա գող էլ չէ։

—Գող էլ չէ։ Կընչանակէ գանձապահ է, երկաթուղու վրայ ծառայող է, ռուսաց մեկենաս է, իրաւաբան է, բարեմիտ խմբագիր է, բարեգործ է... Այսուամենայնիւ գնանք, գնանք օգնենք նրան...

—Ոչ... և ոչ մէկը... գիտէք, ծեծում են թղթակցի։

—Թղթակցի՞,—է՛է, ես էլ կարծում էի ուրիշի... բայց առաջ վերջացնենք բաժակի թէյը։

VI

ՄԵՆՔ ԴԵՌ ԿԸՊԱՏԵՐԱԶՄԵՆՔ

Ինչպիսի մեծ ազդեցութիւն է ունենում երբեմն մարդու վրայ ամենաչնչին միտքն անգամ...

Մի անգամ՝ լի մտածմունքներով, ես գնում էի մեր ճանապարհով։

Ծանր նախազգացմունքները ճնշում էին իմ կուրծքը, վհատութիւնը պատել էր ինձ լիովին։

Ես բարձրացրի գլուխս... իմ առաջևս՝ երկու չարք սօսիների միջով ընկած էր ճանապարհը։

Եւ այդ ճանապարհի վրայ—ինձանից տասը քայլ հեռւում—թռչկոտում էր ուրախ ճնճղուկների մի ամբողջ ընտանիք, թռչկոտում էր աշխոյժ, զւարճութեամբ և ինքնավստահութեամբ։ Եւ նրանց վրայ ընկել էին ամբողջապէս գարնան արևի ոսկեգոյն ճառագայթները։

Առաւել աչքի էր ընկնում նրանցից մէկը, որ այնպէս հպարտօրէն սրան-նրան մղում էր... նա ուռցրած իր կանարքը՝ յանդուգն կերպիւ ճռւողում էր, կարծես թէ ոչնչից, ոչինչ չէր վախենում։ Մի խօսքով՝ կատարեալ աշխարհակալ...

Իսկ նոյն ժամին երկնքի բարձր կամարի տակ պլատում էր բազէն, որ կարելի է ուզում էր ճանկել հէնց նոյն աշխարհակալին։

Ես նայեցի, ծիծաղեցի, ցնցւեցի,—և տխուր մտքերը նոյն բոպէին թռան ինձանից, ես զգացի իմ մէջ սէր, քաջութիւն, անվեհերութիւն դէպի կեանքը։

Եւ թո՛ղ իմ վրայ պտտէ «իմ» բազէն...

—Մենք դեռ կըպատերազմենք, սատանան տանի դրանց...

VII

«Услышишь судъ глупца».

Пушкинъ

„Կըլսես յիմարի դատը“... Դու միշտ ուղիղ էիր ասում, ո՛վ հռչակաւոր երգիչ, դու ուղիղ ասացիր և այս անգամ։

„Յիմարի դատը և ամբոխի ծիծաղը»... Ով չէ՞ փորձել իր վրայ թէ՛ մէկը, թէ՛ միւսը...

Այս ամենը պէտք է և հարկաւոր է տանել, իսկ ո՛վ որ ոյժ ունի—թող ատի...

Բայց կան հարւածներ, որոնք ծանր, ցաւագին կերպիւ են ազդում մարդու սրտի վրայ... Մարդ արել է այն ամենը, ինչ որ կարողացել է, նա գործել է տոկունութեամբ, սիրով. գործել է ազնիւ կերպիւ... Եւ ազնիւ դէմքերը զըզւանքով յետ են դառնում նրանից, ազնիւ դէմքերի վրայ յայտնւում են դժգոհութիւն նրա անունը լսելուց։ «Հեռացի՛ր, գնա՛», աղաղակում են նրան երիտասարդ, ազնիւ ձայները։—Ո՛չ, դու ես հարկաւոր մեզ, ո՛չ քո գործը... դու ապականում ես մեր կացարանները, դու մեզ չես ճանաչում, մեզ չես հասկանում... Դու մեր թշնամին ես“...

Ի՞նչ անէ այդ մարդը։ Ինչքան չարունակի և աշխատի, չի կարող արդարանալ,—և մինչև անգամ չի ստանալ աւելի ուղիղ և արդար գնահատութիւն։

Մի ժամանակ երկրագործներն անիծում էին ճանապարհորդներին, որոնք նրանց օրական հացի փոխարէն բերին նրանց համար դեռնախնձոր։ Նրանք խլում էին դէպի իրանց մեկնւած ձեռքերից թանկագին ընծան, գցում էին ցեխը, տրորում էին ոտներով։

Այժմ նրանք կերակրւում են նրանով—և մինչև անգամ չը գիտեն իրանց բարերարի անունը։

Թո՛ղ... ի՞նչ հարկաւոր է նրանց նրա անունը։ Նա և առանց անւան՝ ազատում է նրանց քաղցից։

Աշխատենք միայն նրա համար, որ մեր բերածը իսկապէս օգտակար կերակուր լինի։

Դառն է անարդար կշտամբանքն այն մարդկանց բերանում, որոնց սիրում ես... բայց կարելի է տանել և այդ...

«Ծեծի՛ր ինձ, միայն լսիր»... ասում էր աթենացոց պետը սպարտացոց պետին։

«Ծեծի՛ր ինձ, միայն եղիր առողջ ու կուշտ»...—պէտք է ասենք մենք։

Լ. ՄԵԼԻՔ ԴԱԴԱՅԵԱՆՑ

ԽԵՆՋԱՐ

(Լերմօնտովից)

Սիրում՝ եմ ես քեզ, պողւատէ խենջար,
Դու իմ սառն ընկեր, փայլուն ու հաստատ,
Վրացին քեզ կռեց վրէժի համար,
Կռիւ գնալով սրբեց քեզ չէրքէզն ազատ:

Նազելի ձեռքը քեզ ինձ մօտ բերեց
Հրաժեշտի ժամին՝ իբրեւ յիշատակ,
Եւ այն օր քեզ վրայ արիւն չըհոսեց,
Այլ տառապանքի արցունքը խտակ:

Եւ սեւ աչքերն ինձ վրայ յառած՝
Գաղտնի տխրութեամբ այնօր լի էին,—
Ինչպէս պողւատ կրակի առաջ—
Մերթ փայլում էին, մերթ մթնում էին:

Նա տւեց, որ դու միշտ առաջս լինես,
Երկաթէ ընկեր, անխօս գրաւական
Մեր անցած սիրոյ,- որ լինեմ եւ ես
Քեզ պէս անփոփոխ, հաստատ քեզ նման:

Գ. Ա.

Խմբագրութեան գրասենեակից

Աղբիւրի Ա. պրէմիան Անառակ որդի պատկերը, նրանք որոնք մի որ և է պատճառով դեռ չեն ստացել, խնդրում ենք յայտնեն, որ անյապաղ կուղարկւի և նրանց։

Խնդրում ենք մեր այն գործակալներից և բաժանորդներից, որոնց խնդիրը յարգելով բացառութիւն ենք արել և ապառիկ ուղարկել մեր թերթերը, շնորհ անեն զէթ այժմ իրանց պարտքը վճարելու։ Հակառակ դէպքում առաջիկայ օգոստոսի մէկից ոչ միայն կը դադարացնւի այդպիսիներին ուղարկել մեր թերթերը, այլ և ստիպւած կը լինենք հրատարակել նրանց այն նամակները, որ հազար ու մի խոստումով խնդրում էին մեզ բացառութիւն անել, ուղարկել մեր թերթերը, պարտաւորւելով մի ամսւայ ընթացքում վճարել։

—

Ժամանակադրութիւն

Դատական նախարարութիւնը մրտադիր է խստացնել պատժական օրէնքները, որոնք վերաբերում են այն ծնողներին և ազգականներին պատուհասելու, որոնք ոչ միայն միջոցներ չեն ձեռք առնում իրանց որդոց կամ ազգականների զաւակների վարքը և բարքը ապականւելուց պաշտպանելու, այլ և իրանք շահագիտական նպատակով գայթակղեցնում և խրախուսում են նրանց վատշէրութեան պողոտայի մէջ։ Միևնոյն կառավարչական կետրօնին առաջարկւած է մի ծրագիր՝ կազմելու համար յատուկ հոգաբարձական հաստատութիւն, որին պիտի յանձնւին այն զաւակները և որբերը, որոնք ծնողներից կամ խնամակալներից ծախւում են անառակութեան՝ դառն չքաւորութիւնից և սոսկալի բարոյական անտարբերութեան պատճառով։ Որովհետև հետախուզութիւնները ապացուցել են, որ ընկած կանանց մեծագոյն մասին դէպի անառակութեան ճանապարհն են մղւած ծնողների, օպեկունների, կողմնակի մարդ և այլն ստիպմամբ։

—

Գանձակից մեզ գրում են։ — Ի նկատի ունենալով, որ մեր ժողովուրդը գրեթէ ամենայն տեղ զրկւած է գէթ կիրակի առաւօտների ժամասացութիւնը ունկնդրելու հոգևոր մխիթարութիւնից, երբ երգւում են այնքան ջերմեռանդութեամբ ու սիրով ընդունւած Զարթիքը, Առաւօտ լուսոյն, կանոնագլուխները և այլն, Գանձակի աւագ ուսուցիչ դպիր Յովհաննէս Խաչումեան և դպրապետ Պօղոս Նորաշէնցին պատրաստում են իրանց ժամասաց խումբերը, որ սեպտեմբերին կիրակամտի երեկոները ժամասացութեան կից անմիջապէս սկսւի գիշերային ժամերգութիւնը մինչև «Լցաք առաւօտեանը», այնպէս որ բարեպաշտ ժողովուրդը, որ ժամանակիս բազմազբաղ հոգսերի պատճառով անկարող է վաղ առաւօտ եկեղեցի յաճախել, մեծ բաւականութեամբ երեկոյեան կերթայ հսկմանը, որպիսի սովորութիւնը վաղուց ի վեր կայ Աստրախան, Ղզլարիսկ մեր կողմերում լինում է միայն նշանաւոր տօների նախատօնակին։

—

Մ. Լերմոնտովի մահւան յիսնամեակի յիշատակը տօնելու համար նախ պիտի կատարւի հոգեհանգըստեան պաշտամունք հանդիսաւոր պատարագից յետոյ Ռ. Մայր եկեղեցում։

Քաղաքը հանդիսաւոր կերպով պսակ կը դնէ բանաստեղծի արձանի վրայ։ Ապա կը լինի բազար-ալեգրայ և երեկոյեան գրական-երաժշտական հանդէս բարեգործական նպատակով. բացի գրանից այդ օրւայ յիշատակին քաղաքը կը պահէ մի թոշակաւոր Վլադիկավկասի դիմնազիայում։

—

Յուլիսի 7-ին Թիֆլիսի գործակատարների ընդհանուր ժողովն էր նախագահութեամբ պ. Ա. Արասխանեանցի, ուր վճռւեց դիմել նահանգապետին թոյլատրւելու, որ գործակատարների քանի տարի առաջ գոյութիւն ունեցող ընկերութիւնը դարձեալ շարունակւի հին կանոնագրութեան համաձայն։ Ընկերութեան առաջին հոգսն է շուտով գլուխ բերել գրաւա-խնայողական արկղ և բարեգործութեան սնդուկ։ Ընկերութեան անդամներն են հայ, վրացի և ռուս։

Դատաստան

Պ. ԳՐ. ԻԶՄԻՐԵԱՆԻ ԴԱՏԸ

Յուլիսի 10-ին, չորեքշաբթի, Թիֆլիսի երկրորդ բաժնի հաշտարար դատաւորի դահլիճը լիքն էր հասարակութեամբ այնպէս, որ ասեղ գցելու տեղ չլկար. ներկայ էին Թիֆլիսի հայ, ռուս և վրացի մամուլի ներկայացուցիչները։

Այդ օրը քննւում էր պ. Գր. Իզմիրեանի գործը, որ պատժական օրիրաց 29 յօդւածի հիման վրայ մեղադրւում էր նահանգական դատարանի նախագահի հրամանը չլկատարելուն մէջ հակառակ 715-դ յօդ. պատժ. օրինաց։

Պ. Իզմիրեան մեղադրւում էր նրանում, որ հրաւիրւած լինելով իբրև վկայ մի քրէական գործի, չի համաձայնւել երդւել ռուս լեզւով հայ քահանայի ներկայութեամբ, այդ պատճառով նահանգական դատարանի նախագահ պ. Բրկով մատնել է դատարանական պատասխանատւութեան պ. Իզմիրեանին։ 72-ամեայ ծերունի Գրիգոր Իզմիրեանն ինքն էր պաշտպանւում դատարանում, առանց փաստաբանի։ Բերում ենք այստեղ դատավարութեան մանրամասնութիւնները, որքան ներում են մեր հանգամանքները...

Հաշտ. դատաւոր.—Պ. Իզմիրեան, յանցաւոր էք համարում ձեզ այն մեղադրութեան մէջ, որ դուք չէք կատարել նահանգական դատարանի նախագահի հրամանը, չերդւելով ռուսերէն լեզւով և պահանջել էք ձեզ երդւեցնել հայերէն լեզւով։

Իզմիրեան.—Բոլորովին ճիշտ է, որ ես պահանջել եմ ինձ երդւեցնել հայերէն լեզւով, համաձայն իմ եկեղեցու և դաւանութեան ծէսերին և այդ բանում ես ինձ մեղաւոր չեմ համարում։ Խնդրում եմ կարդալ նահանգական դատարանի արձանագրութիւնը, որ ես հնարաւորութիւն չունեցայ տեսնելու։

Հաշտարար դատաւորը կարդում է արձանագրութիւնը։

Իզմիրեան.—Պ. դատաւոր, ինձ դատապարտում են պատժական օրէնքների 715-դ յօդւածի հիման վրայ։ Ռուսաց պետական օրէնագրութիւնը բաժանում է մեր երարխիան երեք մասերի. կառավարչական, դատարանական և պօլիցիական։ Դատական իշխանութեան վերաբերեալ գործերը դուրս են ձգւած այն հարցերի թւից,

որոնք ենթական են հաշտարար դատաւորի քննութեան։ Նոյնպէս հաշտարար դատաւորի քննութեան չէ ենթարկուում այն մեղադրութիւնը, որի մէջ մեղադրուում եմ ես։

Հաշտ. դատաւոր.—Դուք մեղադրուում էք Նրանում, որ չէք կատարել նահանգական դատարանի օրինական պահանջը։

Իզմիրեան.—Յայտարարում եմ, որ Ներկայ գործը չէ կարող ենթարկուել հաշտարար դատաւորին։ Այդ մասին ես արդէն բողոք եմ Ներկայացրել դատարանական պալատին, որի մէջ խնդրում եմ պալատին վոխել պ. Բրիօվի վճիռը, որովհետև թէ իմ դանգատը և թէ իմ դէմ եղած մեղադրութիւնը ենթական է միայն պալատի քննութեան, դատ. հատ. օրինագրքի 154, 155, 157 և 158 յօդուածների հիման վրայ։ Այս դէպքում ես ոչ մի օրէնք չեմ խանգարել և այդ մի յանցանք չէ նախատեսուած օրէնքով...

Հաշտարար դատաւորը համարում է Ներկայ գործն ենթական իրան քննութեան։

Իզմիրեան.—Պ. Դատաւոր, իմ բոլոր յանցանքս Նրա մէջ է, որ ես իբրև Հայ-Լուսաւորչական իմ Հայ Լուսաւորչական քահանայի Ներկայութեամբ դատարանի դահլիճում, և Ներկայութեան տեղական Նահանգապետի, Նրա օգնականի և ուրիշ վկաների պահանջել եմ, որ ինձ պետական օրէնքների հիման վրայ երդուեցնեն իմ մայրենի հայ լեզուով, իմ դաւանութեան ծէսերին համեմատ. հէնց նոյն իսկ այն 715 յօդուածի հիման վրայ, որի անունով ինձ ուզում են մեղադրել...

Իմ դաւանութեան հայ քահանան մինչև դատի վերջը Ներկայ էր դատարանի դահլիճում, նոյն իսկ այն միջոցին՝ երբ ինձ առաջարկում էին ռուս լեզուով երդուել։ Եթէ ես կատարէի այդ հրամանը, խախտած կըլինէի 715 յօդուածը։ Ես պահանջեցի, որ ուրիշ հայ քահանայ հրաւիրեն ինձ երդուեցնելու համար հայերէն լեզուով։

Ես իրաւունք ունէի այդ պահանջն անել, որ ինձ երդուեցնեն իմ մայրենի լեզուով, իմ եկեղեցու ծէսի համեմատ նոյն 715 յօդուածի հիման վրայ։ Խնդրում եմ ինձ չդատապարտել, որովհետև ես վարուել եմ պետական օրէնքների համաձայն...

Հաշտարար դատաւորը յանցաւոր համարելով պ. Գր. Իզմիրեանին Նահանգական դատարանի օրինական հրամանը չկատարելու մէջ՝ վճռեց.—ենթարկել պ. Իզմիրեանին 25 ռուբլանքի, իսկ եթէ նա չըկարողանայ վճարել այդ գումարը, դատապարտել Նրան 5 օրուան բանտարկութեան։

Պ. Իզմիրեան բողոքեց այդ վճռի դէմ։

դեղարուեստ

Թատրոն

Հայկական Թատրոնը իր եռամեայ քնից յետոյ վերջապէս կենդանութեան յոյս է տալիս և այդ Հշմարիտ զարմանալի կենդանութեան բոլոր շնորհը պատկանում է այն բուռն եռանդին, որ երևաց վերջին ժամանակ հայ Թատերասէր երիտասարդների մէջ։ Ի՞նչ դժուարութիւններ, ինչ յուսահատական խօսքեր ասէք որ չըձգուեցան այն պարոնների երեսին, որոնք ոգևորուած հայ Թատրոնի գաղափարով, դռնէ դուռ պտտուում էին և առաջիկայ սեզոնի համար դրամ ժողովում։ Այո, եռանդը, անկեղծ սէրը և հաւատը դէպի գործը միշտ յաղթական են։

Թատրոնական վերջին ժողովում, որ կայացաւ հինգշաբթի յուլիսի 11-ին, քաղաքային դումայի դահլիճում, Թատրոնական ժամանակաւոր Կոմիտէի անդամ պ. Ա. Թարխանեան յայտնեց, որ Թատրոնի ապահովութեան համար պահանջւած 2500 ռուբլիից մի հարիւր ռուբլի էլ աւելի է ժողովւած, այն է 2600 ռուբլի, բացի դրանից պ. Ի. Փիթոյեան խոստացել է հայ Ներկայացումների համար Թատրոնի դահլիճը տալ 100 ռուբլով իւրաքանչիւր Ներկայացման (մինչդեռ առաջ արժէր 250 ռ.)։ Ժողովը բուռն ծափահարութեամբ շնորհակալութիւն յայտնեց պ. պ. Աղէքսանդր Թարխանեանին, Տէր Նիկողոսեանին և Ց. Յովհաննիսեանին՝ իրանց եռանդի և անխոնջ աշխատանքի համար, որ Նրանք գործադրեցին յաղթելով բոլոր արգելքներին և ապահովելով հայկական Թատրոնը։

Ժողովի մէջ հարց յարուցուեց, թէ արդեօք անտրսլիդային յանձնել Թատրոնը թէ՞ կոմիտեին. միաձայն վճռուեց Թատրոնի ղեկավարութիւնը կատարելապէս յանձնել Թատրոնական կոմիտեին, որ պիտի աշխատէ տալ ամսական ոչ պակաս քան չորս Ներկայացումն և տարեան վերջում իր գործունէութեան մասին տեղեկագիր Ներկայացնէ Թատերասէրներին և Նիւրատուներին։

Թատրոնական մասնաժողովի անդամները ընտրուեցան հինգ հոգի։ Ուրախալի է, որ երեք պարոններ՝ որոնք այդքան եռանդ գործ դրին Թատրոնի համար՝ ընտրուեցան կոմիտեի անդամներ, այն է պ. պ. Թարխանեան, Տէր-Նիկողոսեան և Յովհաննիսեան. նոր անդամներ ընտրուեցան Ղշլանուկի Բիկիթաբիկեան և Ղշլ. Ամատունի։ Կանդիդատներ պ. պ. Հէջուբեան և Շիրվանզադէ։

Հետևելով ուշադրութեամբ վերջին Թատրոնական Նիստերին, Նկատելով այն ինտրիգները, որոնցով շրջապատւած էր հայկական բեմը, տեսնելով այն օրինակելի եռանդը, որով մի քանի երիտասարդներ պահպանում էին հայկական Թատրոնի դրօշակը, մենք պարտ ենք համարում յիշեցնել հայ հասարակութեանը, որ Նրա վրայ մեծ բարոյական պարտաւորութիւն կայ աջակցել բոլոր սրտով և ոյժով նորընտիր Թատրոնական կոմիտեին, որ նա կարողանայ ամուր հիմքերի վրայ դնել հայկական Թատրոնը։ Մենք աւելի լաւ կարծիք ունինք հայ հասարակութեան վրայ, քան Նրանք, որոնք ամեն քայլում ուզում էին յուսահատեցնել Թատերասէրներին հաւատացնել Ճգնելով, թէ «հայերը ոչինչ չեն տալ», թէ Թատրոնը չի յաջողիլ և այլն և այլն, բայց փորձն այդ „անհաւատ Թոմասներին“ ամաչեցրեց և մենք ուրախ յոյսով սպասում ենք առաջին հայկական Ներկայացման, ոչ ուշ քան հոկտեմբերի 1-ին, ինչպէս վճռուեց վերջին ժողովում։

Երաժշտութիւն

Այսօր, կիրակի Կոջորում տեղի կունենայ սրբակրօն Հ. Թայիրեանի նախաձեռնութեամբ պ. Մ. Վարդիկեանի կօնցերտը։ Պ. Վարդիկեանը թէև փոքր, բայց դիւրեկան ձայն ունի. երկու տարի է, որ Պետերբուրգում սովորում է երգեցողութիւն և այնտեղի հայ եկեղեցումն էլ կիրակի օրերը դպրութիւն էր անում։ Այնանը պ. Վարդիկեանը կոյս Հ. Թայիրեանի հաշուով պիտի դնայ Իտալիա կատարելագործուելու երգեցողութեան մէջ։

Նկարչութիւն

Մեր երիտասարդ նկարիչ պ. Տէր-Աստուածատրեանի ալբոմը, ինչպէս

մեզ տեղեկացնում են, լոյս կը տեսնի առաջիկայ աշնանը։ Պ. Տէր-Աստուածատրեանի ալբոմը բաղկացած կը լինի 30 պատկերներից XIX դարու հայ նշանաւոր հոգևորականների, գործիչների, հերոսների, հեղինակների հայրն։ Մենք առիթ ունեցանք այդ պատկերից մի քանիսը տեսնել և համոզուած ենք, եթէ պարոնը տոկունութիւն ունենայ աւարտել իր սկսածը՝ մեծ յաջողութիւն կունենայ։

դրականութիւն

Ստացանք Շուշուց Մահտեսի Յակոբեանի տպարանում մաքուր տպած «Տարաս Բուլբա» գրքոյկը 61 երես, գինը 5 կ., ռուսաց ականաւոր մատենագիր Գոգոլից շատ հմուտ կերպով թարգմանած։ Գովելով այն գրասիրութեան աշխոյժը, որ կայ Շուշու ինտելեգենտ դասի մէջ, աւելորդ չենք համարում առհասարակ մեր հրատարակիչներն ուշադրութիւնը դարձնել այն հանգամանքի վրայ, որ թիֆլիսում, Շուշում լոյս տեսած գրքերը գլխաւորապէս տարածւում են Արևելեան Կովկասում, իսկ Արևմտեան Կովկասը, ուր տպարանական գործը մեռած է և գրասիրութեան եռանդ և գործունէութիւն չկայ (Նախիջևան, Երևան, Ալէքսանդրապոլ, Ախալցխա), յետ է մնացած Նմանապէս և գերք գնելու գործում, գուցէ անշուշտ և ընթերցասիրութեան մէջ։

Ուստի գրավաճառ-գործակալները անպատճառ պիտի գտնել և Արևմտեան Կովկասում։

—

Ստացանք Մոսկուայից Մ. Բարխուդարեանի տպարանում մաքուր տպած «Լուսադէմին» գիրքը, 570 երես, գինն է 1 ռուբ. հեղինակութիւն Տ. Եօժի։ Թարգմանութեան լեզուն չենք կարող գովել, իսկ բովանդակութեան մասին մեր ընթերցողներին տեղեկութիւն տալու համար, յառաջ ենք բերում հեղինակի նախարանից հետևեալ տողերը.

„Մեր վէպիկը վերաբերում է Բուլղարիայի վերածնութեան մեզ ժամանակակից շրջանին... Թող ընթերցողը չորոնէ վէպիկիս մէջ ոչ պատմութիւն, ոչ Քանտագիա. հեղինակը միայն տալիս է այն շարժման ընդհանուր պատկերը, որ տեղի ունեցաւ բուլղարական ազգի մէջ իւր հինգ դարուայ ընթացքում արթնանալու լուսաբացին։

մամուլի տեսութիւն

Վերջին ժամանակներիս եւրոպական պետութիւնների քաղաքականութիւնը կատարեալ ֆարս-վոդեվիլների կերպարանք է ստացել։ Իւրաքանչիւրը դրանցից իր վերջին կոպեկը ծախսում է զէնքի համար. դեռ չբծնած մանուկներին զինուոր են գրում և միևնոյն ժամանակ այդ բոլորն ասում են՝ կատարւում է յանուն խաղաղութեան։ Բաւական տարօրինակ է թւում ի հարկէ, երբ մարդ տեսնում է դիպլոմասիոնի ներկայացուցիչներին ոտից մինչև գլուխ երկաթակապ զինուած, աչ ձեռին սրած թուր, իսկ ձախին ձիթենու տերև, կրծքին զրահ, իսկ մէջքին խաչ։ Սուր թուր և կրակ յանուն խաղաղութեան, անհատական իրաւունքների մուրացումն, յանուն ընդհանուր մարդկութեան երջանկութեան. ջրի և կրակի հարևանութիւն.—այսպէս է թւում մեզ եւրոպական դիպլոմասիոնի այժմեան դրութիւնը։

Սուր,—ասում էր երկաթի կանցլերը. սէր, գիտութիւն, գեղարուեստ ասում էր թագաւորներից ամենաբարին Ֆրիդրիխը. խնդք եւ այժ, ասում է այժմ նրա ժառանգ Վիլհելմը, բայց այդ երեք տեսակ ձայներն էլ դուրս էին գալիս թնդանօթի բերանից, այդ երեք անհամերաշխ գաղափարներն ևս ձուլած են նոյն կաղապարով թնդանօթի ձևով։ Սա է այժմեան քաղաքականութիւնը, որի մէջ մարդ զգում է իրան քաօսում։

—

Եւրոպական, մանաւանդ անգլիական լրագիրները խաղաղութեան մեծ գրաւական են համարում Վիլհելմի վերջին այցելութիւնն Անգլիային։ Այդ հշմարիտ բարոյական այժով լի թագաւորը չէ ուզում խաղալիկ դառնալ իրա՝ ստացած խաւն ժառանգութեան ձեռին։ Հեռացնելով սարսափի անունով խաղաղութիւն քարոզող Բիսմարկին և բնութեամբ իր հօր չափ սանտիմենտալ չլինելով, նա զարմանալի խելքով և տակտով միացնում է իր մէջ այդ երկու յատկութիւնները, որպէս զի թէ իր հայրենիքին և թէ եւրոպական ուրիշ պետութիւններին ներշնչի խաղաղ կուլտուրայի գաղափարը։ Սարսափելի դժուար և ծանր դեր է, բայց երևում է, որ այդ ծանրութիւնն աւելի եռանդ է տալիս այն կայսեր, որն իրան կոչուած է համարում ամենքի համար մտածելու։

—

Անգլիական լրագրները հաղորդում են, որ Պարնէլն ամուսնացաւ տիկին Օ՛շիի հետ. նա կատարեց ուրեմն անգլիական եկեղեցու պահանջը, բայց էլի փարիսեցիութիւնը չարունակում է նրա վրայ քարեր ձգել։ Զարմանալի է ամբոխը, նա եթէ առամներն սկսում է կրճատել մի հերոսի վրայ, եթէ այդ հերոսը ամենավտանգաւոր լոպէին ամբողջ մի ժողովուրդ ազատելու համար իրան ձգի առիւծի ճանկերի մէջ, այնու ամենայնիւ ամբոխը պէտք է նրան առնի առիւծի ճանկերից, միմիայն նրա համար, որ ինքն իր առամներով նրան գզգի։ Այո, «տարօրինակ արարած է մարդը», ասում է կոմս Տօլստոյ...

—

Մայրաքաղաքի լրագիրները հաղորդեցին մի ուրախալի լուր, որ տնայնագործութեան արդիւնաբերութեան գործերը կառավարելու համար նոր օրէնք է հրատարակւել։ Այդ օրէնքը, ասում է „Русс. Вѣдом." ուղղակի լրացումն է 1888 թւականի օրէնքին, որով հիմնուեց այն սկզբունքը, թէ պետութիւնը պէտք է օգնէ հայրենիքի արդիւնաբերութեան ծաղկելուն։ Ինչպէս բացատրում է լրագիրը, ներկայ խնդրում պետութեան օգնութիւնը պիտի կայանայ նրանում, որ նա օժանդակի տնային արդիւնաբերութեան տեխնիկական մասի կատարելագործելուն։ Այդ հանգամանքն աւելի ուրախալի է մեր կովկասցիներիս համար, որ խոշոր արդիւնաբերութեան համար ֆաբրիկներ, գործարաններ չկան, այլ արդիւնաբերութեան մեծ մասը տնայնական է, ուր հինգ կին միասին հինգ ամիս աշխատելով մի գորգի վրայ, նրան վաճառելու ժամանակ օգուտ են ստանում հինգ ռուբլի. մինչդեռ եթէ գորգի գործելու տեխնիկան կատարելագործէր, այդ անդադար աշխատող կանայք ամիսը մի ռուբլի աշխատելու տեղ, կարող էին օրական մի ռուբլի, գուցէ և աւելի աշխատել։ Այդ միևնոյնը կարող ենք ասել և ուրիշ շատ տնային արհեստների մասին։

—

Տեղական լրագիրները... Ի՞նչ ասել տեղական լրագրների մասին։ Ո՞ւմ արձագանքն են դրանք. մեր երկրի չահերի՞ն, թէ մայրաքաղաքի լրագիրների՞ն, երկուսին էլ միայն բացասական պատասխան կարելի է տալ։ Մայրաքաղաքի լրագիրների բորբոսնած „смѣсь", „разныя разности" ծառայում են դրանց համար իբ-

րև ամենաարդիւնաւէտ նիւթ լրագրի համար. և դեռ զարմանում են, որ մեր ժողովուրդը լրագիրներով չէ զբաղւում: Ի՞նչ էք տալիս, որ ի՞նչ պահանջէք:

Ego

—

Խառն լուրեր

ԻՆՉԻ Է ՊԷՏՔ ՎԱՐԴԸ.

Ծաղիկների թագուհին, վարդը, առաջին պաշտելի եւ սիրելի ծաղիկն է, մանաւանդ գեղեցիկ սեռի համար. նա է արեւելեան քնարերգակ բանաստեղծների փայփայած եւ ոգեւորիչ մօտիւը. ուստի նա առանձին մշակութեան առարկայ է եղած ծաղկապահների համար, այնպէս որ այժմ հաշւում է երեք հազար տեսակի վարդ:

Միայն կարելի է ցաւել, որ նրանց չքնաղ գրաւչութիւնը վաղանցուկ է, շուտ են թառամում, այնու ամենայնիւ նա մեզ մի քանի օգուտներ է տալիս:

Պէտք է վարդը կտրել վաղ առաւօտեան երբ նոր է սկսում բացւիլ կոկոնը. բոլորովին վառուած վարդը արդէն կորցրած է լինում իր որակների մի մասը: Թերթիկները պոկում են եւ իսկոյն չորացնում եւ լաւ ծածկւած փայտէ ամաններում պահում են. հին բժիշկները խորհուրդ էին տալիս կրծքացաւ ունեցողներին գործ ածել վարդը հեղուկակերպ. հիմա իսկ այդ դարմանը տալիս են այդպիսի հիւանդներին յատուկ քրտնքի եւ լուծման դէմն առնելու համար:

Քնքոյշ կազմւածքի եւ ջղային տիկիններին շատ օգուտ է ամսի յայտնի օրերում խմել վարդի թերթիկների հիւթը լիմօնի թթւատի հետ:

—

Յայտնի է, որ տեղափոխւող թռչունները աշնանը դէպի հարաւ չեւելիս, Միջերկրական ծովով անցնելիս, հանգիստ են առնում անհամար վտառներով Իտալիայի ծովափունքների վրայ. այդ ժամանակ տեղական բնակիչները կոտորում են նրանցից անբաւ քանակութեամբ: Մարդկանց այդ բարբարոսական վարմունքի առաջը գէթ մասամբ առնելու համար, ռուսաց եւ շեղացոց կենդանիներին հովանաւորող ընկերութիւնները դիմել են Իտալացոց Մարգարիտա թագուհուն, թախանձելով, որ նա իր արքայական բոլոր ազդեցութիւնը գործադրէ այդ չարիքի առաջն առնելու համար. այսպիսի առաջարկութեանը գերազնիւ բամբիշը վերաբերւել է մեծ համակրանքով:

—

Ե ղ ի ն ճ ը մեզանում համարւում է անպէտք քաղահանելու արժանի խոտ. մինչդեռ արտասահմանում նա զարմանալի օգտակարութիւն ունի ընտանի կենդանիների եւ թռչունների համար: Եթէ մէկը կամենում է, որ կովերն աւելի կաթ տան եւ վրայ գան, թող ամառը, երբ նրանք արօտից վերադառնում են, կերակրէ նրանց եղինճով, որ նախ քան ուտեցնելը պէտք է պատրաստել այս եղանակով: Եղինճը քաղելուց յետոյ, մանր կտրտել, վրան ածել եռման ջուր, քիչ աղ ցանել եւ տալ կենդանիներին: Իսկ թռչուններին ուտեցնելու համար պէտք է աւելի մանր ջարդել եւ անալի միայն խառնել թեփի հետ եւ տալ թռչուններին: Ով որ մի անգամ փորձէ այս միջոցը, միշտ կըշարունակէ նրան:

Սուրհանդակ

ԲԱԹՈՒՄ. Գր. Գր-ին. Քսան օրինակ. սպասում ենք. աճպպարեցէք յղել խմբագրութեանը:

ՇՈՒՇԻ. Շատերին. Հին ժամանակն էլ ձեր պապերը սիրում էին բացառիկ դիրք բռնել: Ընդհանուրի հետ գնալը ուղիղ ճանապարհն է. հակառակ դէպքում կը վնասէք եւ կը վնասւիք:

ԳԱՆՁԱԿ. Յ. „Լաւ է անուն ըարի, քան զգանձ աշխարհի“ եւ թէ՝ „խիստ է քեզ ընդդէմ խթանի աքացել“:

ՇԱԽՄԱԹ

ԽՆԴԻՐ 6

Սպիտակները սկսում են եւ տալիս 3 մաթ

Սեւերը



Սպիտակները.

Յոդիսի 1-ի առաջին ձերքին փոխառոտիեան խաղարկոտիեան հանգցրած տոմսերի սերիաների ցանկը.

18595, 8164, 1987, 13209, 18333, 9358, 14717, 4443, 11836, 3199, 1764, 17473, 7402, 10418, 19501, 18022, 8745, 4260, 18652, 14998, 12687, 9062, 13249, 92, 5166, 10582, 15099, 15646, 12470, 1011, 7995, 15950, 8843, 18888, 2854, 19493, 9252, 5745, 6745, 766, 13519, 11481, 8112, 15370, 282, 12179, 8311, 3709, 7139 16986, 3546, 927, 3563, 11927, 11535, 4455, 15759, 3944, 12063, 8410, 2955, 5927, 6496, 8072, 3954. 19313, 19189, 6858, 7828, 19291, 17078, 8825, 6235, 12975, 13688, 414, 17042, 15793, 11866, 7889, 18058, 3341, 19960, 12641, 10246, 6759, 17803, 18202, 11018, 9378, 3775, 17764, 14531, 16461, 531, 3958.

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Յոդիսի 1-ին առաջին ձերքին փոխառոտիեան խաղարկոտիեան հետեւեալ տոմսերն են տարել 600 ր. գոմարը.

№№ տոմս.	№№ սերի	№№ տոմս.	№№ սերի	№№ տոմս.	№№ սերի
1	1758	2	25	2	7024
1	6143	2	4757	2	9097
1	17690	2	6343	2	11518

№	սերիա	№	սերիա	№	սերիա
2	11869	22	15715	36	12846
2	13178	22	16115	36	12887
3	4897	23	6252	36	16479
4	3541	23	10087	36	17336
5	7717	23	10412	36	18883
5	14134	23	15568	37	4483
6	3209	23	19895	37	6722
6	9354	24	4551	37	14799
7	2504	24	10187	37	16686
7	3834	24	11552	38	2340
7	4830	24	12796	38	8990
7	8423	24	17278	38	11338
7	13646	25	18345	38	19428
7	17877	25	1009	39	264
8	1998	25	2778	39	5799
8	4285	25	14503	39	8445
8	7106	25	14903	39	8941
9	13888	25	15345	39	15353
9	16966	26	444	40	8143
10	257	26	1139	40	8724
10	1883	26	8519	40	9095
10	2768	26	9526	40	13091
10	7861	26	10723	40	17208
10	10265	26	12535	40	17895
10	16330	26	13088	41	7012
10	19910	26	14311	41	11112
10	19640	27	3417	41	12392
11	1732	27	7495	41	14508
11	6707	27	10461	41	14692
11	12899	27	14129	41	15246
12	329	27	14580	41	18778
12	5471	27	18486	42	4527
12	12650	28	1206	42	6695
13	7943	28	4648	42	8032
13	8765	28	11804	42	10240
13	13974	28	12260	42	11827
13	14791	28	13664	42	19439
13	15063	28	13903	42	19502
13	17787	29	4764	43	53
13	18101	29	11400	43	9901
14	1377	29	17674	43	18398
14	7484	29	18048	44	2154
14	9508	30	2007	44	6867
14	11342	30	5104	44	9642
14	14728	30	5151	44	13916
14	15212	30	8794	45	1462
15	1188	30	8962	45	6927
15	2308	30	14369	45	12932
15	10441	30	17053	45	19268
15	14291	31	2529	46	5703
16	2662	31	3021	46	7841
16	11354	31	3720	46	10289
16	11578	31	9508	46	17691
16	12550	31	11829	46	18968
16	14406	31	17309	47	1465
16	18869	31	17344	47	2775
17	393	31	18243	47	3075
17	4291	32	60	47	3910
17	4771	32	1440	47	5787
17	5890	32	3541	47	7214
17	14190	32	7332	47	10466
18	2062	32	12072	47	12278
18	5670	32	14697	47	14781
18	18915	32	17300	48	7931
19	195	33	1284	48	9083
19	6264	33	7927	48	6364
19	8191	33	9870	48	9731
19	17373	34	1903	48	10688
19	17840	34	10846	48	10878
19	19925	34	14020	48	11598
20	938	34	14925	48	13077
20	2633	35	1242	48	14935
20	6664	35	8470	49	956
20	14923	35	13624	49	5374
21	5340	35	14049	49	11395
21	7312	35	16124	49	12130
21	14007	35	16942	49	17795
21	14754	35	19138	49	17928
21	16788	36	1470	49	18985
21	17177	36	5555	50	3171
21	18542	36	6418	50	14924
22	3293	36	7733	50	19894
22	15659	36	8303		

Խմբ.-հր. Տիգրան Նագարեան

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՄԻՔԱՅԷԼ ԻՒՐԵԻՒՉ ԼԵՐՄՕՆՏՕՎԻ

ՄԱՀՒԱՆ ՅԻՍՆԱՄԵԱԿԻ ԱՌԻԹՈՎ

Լոյս տեսան հայերէն եւ ռուսերէն լեզուներով

Դ Ե Ի

Արեւելեան միստերիոն

Պատկերազարդ

ՇՈՒՆԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Հեղինակի պատկերով

ԳԻՆՆ Է **30** *ԿՈՊԵԿ*

ДЕМОНЪ

Восточная повѣсть

въ 3 частяхъ

иллюстр. изящное изданіе

съ біографіею и портретомъ

Автора.

Цѣна **30** коп.

Կարելի է ուղարկել եւ փոստի մարկաներ

Դիմել՝ Թիֆլիս, Редакція Агбюръ.

ԱՐՕՐ

ԳՆԴԱՐԻՆԵՍՏԱԿԱՆ ՏՊԱՐԱՆ

«ԱՂԲԻՒՐ և ՏԱՐԱԶ»

Պատկերազարդ հանդէսների

Տպագրում է ամեն լեզուներով **գրքեր,** *լրագրներ,* բլանկներ, *ՍՅԵՏՈՒՄՆԵՐ,* պատկերազարդ. ամեն տեսակ հրատարակութիւններ, *իր վրայ առնելով* ԿԼԻՇԵՆԵՐԻ փոխարարել տալը, **ՊԱՏԿԵՐՆԵՐԻ նկարելը,** *ՍՐԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ,* **ԹՈՒՂԹ,** ԿԱԶՄԵՆ ու ԲՐՕՇԻՒՐ ԱՆԵՐ։

Հասցէն՝

Тифлисъ, уг. Головин. просп. и Барят, уг. Художественная Типографія „АРОРЪ“.

Տիկին Էդգրէն Լէֆլերի

ՄՐՅՈՒՄՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՀԵՏ

թարգմ.

Ս. Հախումեանի

Գինը 40 կոպ.

Առաջին մասնաւոր հիւանդանոց

ԲԺՇԿԱՊ. Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆՑԻ

(Կուկիա, Վլորենցովի արձանի դիմաց)

Հիւանդներին ընդունում են ամենայն օր, բացի կիրակի օրերից

ԱՌԱՒՕՏՍԵՐԸ

Նահանգապետաց 9—11 ժամը վիրաբուժական եւ առաջնակարգ, վեներական եւ աչքացաւի հիւանդութիւնների համար։
Բոլորովսկի 10—11 ժ. ներքին, երեխայոց եւ կանանց հիւանդ.
Կին բժիշկ Խառնակեանց 11 ½—12 ժ. կանանց եւ երեխայոց հիւանդ.
Կին բժիշկ Մոռխրանովայա 12—1 ժամ. Կանանց եւ ներքին հիւանդ.
Պիսարեւսկիյ 12—1 ժ. Ականջի, կոկորդի եւ քթի հիւանդ. եւ մասաժ.
Կարապետեանց 12 ½—1 ժ. Ներքին եւ երեխայոց հիւանդ.

ԵՐԵԿՈՅՆԵՐԸ

Պոդգինով 5—6 ժ. Մանկական, ներքին եւ նեարդային հիւանդ. էլէքտրոէլեկտրական
Գարդոմնիյ 5—6 ½ ժ. Սիֆիլիսի (եւ կաշւի) եւ վիրաբուժական հիւանդ.
Նահանգապետաց 6—7 ժամը.

Հիւանդի իւրաքանչիւր այցելութիւնը հիւանդանոցում արժէ 50 կոպէկ։

Բժշկներիհամախոհությունի(կոնսուլտացիա) համար առանձին համաձայնութիւն է կայացնում։

Հիւանդանոցում գտնւում է միշտ օրապահ բժիշկ. երեկոյեան ժամն 9-ից մինչեւ առաւօտեան ժամը 7-ը.

Հիւանդանոցի վերատեսուչ բժշկապետ

ա. ա. *Նաւասարդեանց։*

Լոյս տեսաւ

ՍՐԻՆԳԻ

ԲՆՈՒԹԵԱՆ ԵՐԳԵՐ

ԵՒ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

1880—1889

Գինն է 60 կոպ.

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ

ԳԵՂԱՊԳԻՐ ԱՒԷՔՕՐ

Գծագրեաց Մարգարիտ Ալէքսանեան

Բաժանորդներին ուղարկուեց յուլիսի 1-ին։

գինն է 2 ր.

Վաճառւում է «Աղբիւր—Տարազի» գրասենեակում։

ՍՊԱՍՏԻՊ ԿԱՅՏՈՒՄ

ՄԵԾԱԳՈՒՅՆ ԿԱՄՈՒՐՋԻ ՎՐԱՅ, ՄԻԵՐԶՈՎԻ խանութներում։ Զգեստներ կան թէ երեխաների եւ թէ հասակաւորների համար եւ վաճառւում են ամենաձեռնտու գներով։ 10—10

ՇՈՒՇՈՒ Ազգայնի Հոգեւոր Դպրանոցի տեսչութեան ՏՊԱՐԱՆՆ ընդունում է *տպարանական* ամեն տեսակ պատուէրներ։ Տպարանին կից գրավաճառանոց եւ ուսումնարանական պիտոյքների վաճառում։

ՏՊԱՐԱՆ „ԱՐՕՐ“ Տ. ՆԱԶԱՐԵԱՆԻ Доз. Ценз. Тифлисъ 12-го іюля. 1891 г. Тип. Ароръ Т. Я. Назарьянъ. Уголъ Голов. пр. и Барят. ул.